

ՕՐԱԽՆԴԻՐ

ՃԱՆԱԳՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԵՏԻ ՄԵՎՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարտի 13-ին Արցախի պետական համալսարանի հյուրը ոչ ֆորմալ կրթության ծրագրով տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Թաթևուհի Մանասերյանն էր: ԱՄՆ-ում, Եվրոպայում, Չինաստանում դասախոսություններով հանդես եկող տնտեսագետի համար, իր իսկ խոստովանմամբ, մեծ ուրախություն է հանդես գալ Արցախի դասախոսների և ուսանողների առջև: Ռեկտոր Արմեն Սարգսյանը, ողջունելով ճանաչված տնտեսագետի հերթական այցը ԱրԴՀ, ասաց, որ այդ հանդիպումով 2019թ. մեկնարկում է ոչ ֆորմալ կրթությունը Արցախի մայր բուհում:

Թ. Մանասերյանի դասախոսությունը տնտեսական անվտանգության մասին էր: Այդ թեմայով մի քանի օր առաջ ՀՀ ազգային անվտանգության խորհրդում նա ներկայացրել է պետության բարձրագույն պաշտոնատար անձանց:

Ըստ տնտեսագետի՝ զարգացումը պետք է ունենա երկու հիմնասյուն՝ անվտանգություն և մրցունակություն: Որպեսզի զարգացումն իրատեսական լինի, պետք է ոչ թե պարզապես թղթին հանձնել ցանկությունները, այլև դիտարկել սպառնալիքների դաշտը և փորձել դրանք վնասագեթծել կամ գոնե կրճատել՝ հավատալու, որ այդ ցանկությունները հնարավորինս զերծ են հակակշռող լուրջ սպառնալիքներից, և հնարավորություն է ընձեռված իրացնել սեփական մրցակցային առավելությունները: Տնտեսա-

կան անվտանգության սպառնալիքների դաշտը մեծ է: Դրանում և՛ ներքին, և՛ արտաքին սպառնալիքներն են: Բանախոսն օրինակ բերեց 2008 թվականը, որը վատ չէր Հայաստանի համար, որովհետև երկնիչ թվով տնտեսական աճ էր գրանցել, սակայն տնտեսությունը դրամից հետո անկում ապրեց համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով: Տնտեսագետն այն կարծիքին

յուն: Դրա հնարավորությունները քիչ չեն: Համագործակցության հիմքում առաջին հերթին նա տեսնում է Հայաստան-Արցախ տնտեսական ինտեգրման ծրագրի մշակումն ու իրականացումը: Իհարկե, Արցախը Հայաստանի մասն է, բայց Արցախ-Հայաստան տնտեսությունների ինտեգրման ծրագրի պետք է լինի: Արցախյան շարժումից անցել է 31 տարի, սակայն մինչև հիմա չունենք:

«Շատ դեպքերում պատճառաբանում ենք, որ Ռուսաստանը թույլ չի տալիս, կամ մեկ այլ ուժ, Սորոսն է ամուսն: Ես չեմ հավատում, որ նրանք են գլխավոր պատճառը: Եթե մենք մեզնից կախված անենք, մեր առաջ այդպիսի խնդիրներ չեն առաջանա»,- ասաց տնտեսագետը:

Սպառնալիքների դաշտը դիտարկելով՝ նա նշեց, որ նախ

է, որ ընդհանրապես զարգացման մասին խոսելիս, ինչպես նաև կառավարության գործունեության ծրագիրը կազմելիս ավելի իրատեսական լինելու համար նպատակահարմար է չբացառել հնարավոր սցենարները, և որ ամեն ինչի մեջ Արցախը լինի: Հայաստանը կարող է և պետք է հնարավորություն ընձեռի Եվրասիական տնտեսական միությունում Արցախը ներկայանալու: Թ. Մանասերյանն այդ մասին օրերս խոսել է ՀՀ ԱԺ Եվրասիական ինտեգրման հանձնաժողովում: Նա առաջարկել է Արցախը պատշաճ ներկայացնել Եվրասիական շուկա-

պետք է հասկանալ դրանց պատճառները և գնահատականներ տալ սահմանային մեծություններով: Տնտեսության մեջ սպառնալիքները վերացական չեն կարող լինել, դրանք կոնկրետ են՝ պարենային, էներգետիկ անվտանգություն, արտաքին պարտք և այլն: Անվտանգության կազմակերպման միջոցներից է ռազմավարությունը: Տնտեսագետն այն մեր կյանքի կարևորագույն բացերից է համարում ներկա աշխարհաքաղաքական իրավիճակում: Համեմատության համար բերեց Թուրքիայի Հանրապետության օրինակը, որն արդեն քանի դար է՝

Կարմիր գիրք ունի՝ երկրի ռազմավարությունը: Նրանում ամփոփված է յուրաքանչյուր հարյուրամյակի համար այդ երկրի զարգացման ծրագիրը, որը կարող է թեթևակի վերանայվել մեկ-երկու տասնամյակը մեկ, եթե աշխարհում գլոբալ փոփոխություններ տեղի ունենան, որոնք հավանաբար կարող են ազդել Թուրքիայի վրա: «Մենք պատկերացում ունենք, թե որտեղ ենք տեսնում մեզ 50, 100 տարի հետո»,- հարցնում է նա ու պարզաբանում. հարյուր տարին մեծ ժամանակահատված է: 88-ը թվում է՝ երեկ է եղել, բայց մեկ երրորդ դար արդեն անցել է: Ժամանակն այդպես արագ գնում է, և մեզ մեր հետագա սեռերին միացնողը պետք է լինի ռազմավարությունը՝ ազգային գաղափարախոսության հետ միասին: Չարմանալի չէ, որ տնտեսագետը խոսում է ազգային գաղափարախոսությունից, քանի որ՝ «Առանց դրա ամեն ինչ ոչինչ է, եթե մենք մեզ չենք զգուս որպես մեկ միասնություն, մեկ ազգ, մեկ ուժ: Վաղը կարող է Նորբյան մրցանակակիրներ գան և հետաքրքիր դասեր տան այստեղ: Իհարկե, մենք նրանցից սովորելու շատ բան ունենք, բայց դա մենք պետք է շարենք մեր ազգային գաղափարախոսության վրա, տեսնենք՝ ինչքանով են համապատասխանում, ինչքանով են համահունչ մեր խնդիրներին»,- շարունակեց նա:

Ո՞րն է մեզ սպառնացող վտանգներից ամենավտանգավորը: Ըստ տնտեսագետի՝ չնայած արտաքին պարտքը հասել է 70 տոկոսի և թուլատրելի սահմանը վաղուց հատել է, և դա լուրջ սպառնալիք է, բայց մեզ համար թիվ 1 սպառնալիքը ժո-

ղովորդագրականն է: Ունենք նաև ինտելեկտուալ անվտանգության սպառնալիք: Նրա դիտարկմամբ՝ որակական առումով մենք ետ ենք մնում աշխարհի զարգացումներից: Այն կրթությունը, որը պետք է ծառայի մեր առաջընթացին, դեռևս չի տրվում, ինչի արդյունքում դառնում ենք դոմոր աշխարհի համար: Եվ արդեն՝ 30 տարի:

Պետք է ճիշտ հաշվառել, գնահատել և արդյունավետ օգտագործել ռեսուրսները և հնարավորինս ինքնաբավ դարձնել Արցախը: Տնտեսագետը դա իրատեսական է համարում: Արցախը և մարդկային ռեսուրսների, և՛ ինտելեկտուալ կարողությունների առումով կարիք ունի տնտեսական դիվանագիտության գործընթակազմի օգտագործման: «Սա ոչ միայն գիտություն է, այլև արվեստ, սա նաև գործնական շատ կարևոր նշանակություն ունի, քանի որ այն, ինչ իրականում անվանում ենք Արցախի մրցակցային առավելություններ, շատ դեպքերում սահմանափակ շրջանակների կարող է հայտնի լինել, մինչդեռ ամբողջ աշխարհին մենք կարող ենք մատուցել Արցախի տնտեսության բոլոր ճյուղերում ձեռք բերված արդյունքները: Դրա համար մատուցման կարևորագույն ձևերից մեկը տնտեսական դիվանագիտությունն է»,- այս միտքը վերստին շեշտեց տնտեսագետը:

Թ. Մանասերյանը պատասխանեց ուսանողների ու դասախոսների հարցերին, համալսարանին փոխանցեց ամերիկյան գործընկերների աջակցությամբ ձեռք բերված մասնագիտական գրքերը:



Պրոֆ. Թ. Մանասերյանը դասախոսություն է անցնում ԱրԴՀ-ում:

ՂԱՄԱՏԵՐ ԸՆՆԱՐԿՈՒՄԸ՝ ԽՆԴԻՐՆԵՐՆ Ի ՂԱՅՏ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ԼՈՒՇԵԼՈՒ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՐԹԱԿ

Նշեց, որ օլիմպիական մարզաձևերի զարգացման նպատակով նախարարությունը նախապատվությունը տալիս է այդ մարզաձևերով անցկացվող միջոցառումներին: Եվրոպայի և աշխարհի առաջնություններին մասնակցելու համար ֆինանսավորվելու են միայն այն մարզիկները, ովքեր ՀՀ առաջնությունում կգրավեն մրցանակային տեղեր: 2019թ. նախարարությունը սպորտի ոլորտում իրականացնելու է հետևյալ ծրագրերը. ՀՀ, Եվրոպայի, աշխարհի առաջնություններին, գավաթի խաղարկություններին, միջազգային մրցաշարերին մեր մարզիկների ապահովում և խրախուսում, ԱՀ տարբեր մարզաձևերից առաջնությունների կազմակերպում, գանգվածային մարզական միջոցառումների անցկացում՝ սկսած նախադպրոցական տարիքից մինչև տարեցներ և հաշմանդամներ, մարզաձևի զարգացման նպատակով ՀՀ-ից մարզիկների հրավիրում ըստ ֆեդերացիաների պահանջարկի ու առաջարկի, մրցումներում վնասվածք ստացած մարզիկների բուժման փոխհատուցում:

Արցախում գործող մարզական ֆեդերացիաներին ԼԴՀ պետական բյուջեից ֆինանսավորման կարգում նախատեսված փոփոխությունների, ֆինանսական աջակցության գումարի չափի ձևավորման պայմանների բարելավման մասին, բարձր արդյունքներ արձանագրած

մարզիկների և մարզիչների խրախուսման կարգում կատարված փոփոխությունների մասին ներկայացրին մարզական կազմակերպությունների և մարզական ֆեդերացիաների հետ համագործակցության բաժնի վարիչ Վալերի Հայրիյանը և սպորտվարչության բաժնի վարիչ Լևոն Գասպարյանը:

Սպորտի ոլորտում իրականացվող պետական քաղաքականության գերակա ուղղությունները, հետագա աշխատանքները, գերակայացրեց ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը: Նշեց, որ միայն վերջին տարում ոլորտին ուղղված պետական հատկացումներն աճել են 70 տոկոսով: Թե՛ պետական բյուջեից և թե՛ պահուստային ֆոնդից ամեն տարի հսկայական գումարներ են ուղղվում սպորտի զարգացմանը: Պետական աջակցության շնորհիվ ֆինանսական հոսքեր են ներգրավվել նաև տարբեր հովանավորներից: Ոլորտում իրականացված պետական քաղաքականության արդյունքում բազմաթիվ մարզաձևերով առաջընթաց, հաջողություններ են արձանագրվել, աճել է սպորտով զբաղվող երեխաների ու երիտասարդների թիվը: Տարեցտարի նոր քայլեր են ուղղվում մարզական նոր կա-

ռույցների ստեղծման, մարզադաշտերի, մարզադահլիճների, մարզահրապարակների հիմնանորոգման, մարզագույքով ապահովման, մարզական ներուժի բացահայտման, մարզիկների խրախուսման ուղղությամբ: Ոլորտի աշխատանքները պահանջում են հստակ կանո-



Մարզական կազմակերպությունների ներկայացուցիչները:

նակարգում: Նախարարը նշեց, որ ոլորտում գործող երկու օրենքները՝ «Ֆիզկուլտուրայի և սպորտի մասին» և «Մանակապատանեկան սպորտի մասին», պետք է վերանայվեն, ընդունվեն իրավական ակտեր, քանի որ սպորտի մասսայականացման արդյունքում հազարավոր երեխաներ ներգրավված են տարբեր մարզաձևերով մարզադպրոցներում, և նրանց առողջության ու մարզական գործունեությունը պատշաճ վերահսկելու, մարզիչներ-

ին լիցենզավորելու անհրաժեշտություն կա: Նախագծերը հենց նպատակ ունեն կանոնակարգել այդ և շատ այլ հարցեր: Նախարարության կողմից անցկացվող մոնիթորինգի արդյունքում կուսումնասիրվեն բոլորի պայմանները, կգնահատվեն կարիքները, կդասավորվեն առաջնահերթությունները և ըստ դրանց կուղղվեն պետական ու հովանավորչական միջոցները, տեղեկացրեց նախարարը: Մարզադպրոցների համար օրինակելի կանոնադրություն կհաստատվի, և համապատասխան պահանջներ կդրվեն նրանում:

Նախատեսված է ավելացնել մարզֆեդերացիաներին հատկացվող բազային գումարները, նաև հնարավորություն է ստեղծվում նրանց արդյունքների հիման վրա ավելացնել այդ հատկացումները:

Նախարարը շեշտեց, որ պետական քաղաքականությունն ուղղված է լինելու օլիմպիական մարզաձևերի խրախուսմանը, քարոզմանը, տարածմանը, միաժամանակ ոչ մեկին չի արգելվի ցանկացած այլ մարզաձևով զբաղվել, եթե այն չի վնասում երեխայի առողջությամբ:

ըր:

Շուրջ երեք ժամ տևած հանդիպման ժամանակ մարզաշխարհի ներկայացուցիչները գրավոր և բանավոր ներկայացրին իրենց առաջարկությունները, ինչպես նաև հուզող հարցերը: Դրանք կներառվեն նախագծերում, նորից կքննարկվեն և նրանց հավանությանն արժանապատվություն հաստատմանը: Նախարարը հորդորեց բոլորին աշխատել մեկ միասնական մարզական համայնքի գիտակցությամբ, քանի որ «մեզ համար կարևոր է ոչ միայն օլիմպիական մարզաձևերի զարգացումը, այլև հենց օլիմպիզմի գաղափարախոսության և օլիմպիզմի փիլիսոփայության ներդրումը յուրաքանչյուր անհատի մեջ»,-ասաց նա:

Ն. Աղաբալյանը տեղեկացրեց, որ նման ձևաչափով քննարկումները կդառնան ավանդական:

Հանդիպումն ավարտվեց հաճելի արարողությամբ: Մարզական բնագավառում երկարամյա ու բեղմնավոր գործունեության համար և ծննդյան 65-ամյակի կապակցությամբ նախարարության պատվոգրով և դրամական պարգևավճարով պարգևատրվեց ՀՀ վաստակավոր մարզիչ, «Ղարաբաղ» ֆուտբոլային թիմի անդամ Կառլեն Սիմոնյանը:

ԱՄՓՈՓՈՉ

ԱՐՊՇ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՆԻՍՏ

1 Զաշվետու ժամանակաշրջանում Արցախի մայր բուհը մասնագետներ է պատրաստել բակալավորիատի 25 ու մագիստրատուրայի 30 կրթական ծրագրերով՝ 5 ֆակուլտետի և 20 ամբիոնի միջոցով: Համալսարանը շարունակել է աջակցել դասախոսների մասնագիտական աճին, երիտասարդների գիտական աշխատանքների կատարմանը: Հաշվետու ժամանակաշրջանում թեկնածուական ատենախոսություն են պաշտպանել 6 ասպիրանտ և հայցորդ: Արդեն 5 տարի է՝ ԱրՊՀ-ում գիտական կոչումները տրվում են բացառապես ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան. արդյունքում այդ նպատակով գիտխորհրդի կողմից շնորհված 6 դոցենտի կոչումները հաստատվել են ԲՈԿ-ի կողմից:

2017-2018 ուսումնական տարում բակալավորիատի ուսանողների թիվը եղել է 2259, որից առկա ուսուցման համակարգում՝ 1501, հեռակա՝ 758, մագիստրատուրայում՝ 385: Ընդհանուր առմամբ համալսարանում վերջին 5 տարիներին նկատվում է ուսանողների թվի նվազում. հիմնական պատճառներից մեկը ճարտարագիտական ու շինարարական մասնագիտությունների տեղափոխումն է նորաստեղծ Շուշիի տեխնոլոգիական համալսարան:

Չնայած ԱրՊՀ հեռահար նպատակը գիտական առաջատար օղակի կայացումն է, կրթական և գիտական գործունեության հավասարակշռումը, ներկա պայմաններում, ըստ ռեկտորի, դա անիրական է, և որպես հիմնավորում՝ մատնանշեց 2018թ. նախահաշվում գիտական ծախսերին հատկացված գումարի չափը՝ 2,7մլն դրամ կամ ընդհանուրի 0,3%-ը: Այդով հանդերձ, տարվա ընթացքում ԱրՊՀ-ում կազմակերպվել են դասախոսների և ուսանողների մասնակցությամբ մեկ տասնյակից ավելի գիտաժողովներ, տարաբնույթ գիտական քննարկումներ ու ընթերցումներ: Համալսարանականները մասնակցել են նաև այլ բուհերում կազմակերպված մնամ միջոցառումների, հատկապես ակտիվությունը նկատելի էր ուսանողության մակարդակով: Ռեկտորն առանձնացրեց Ղարաբաղյան շարժման 30-ամյակին նվիրված համահայկական ուսանողական գիտաժողովի և ֆորումի անցկացումը: Նշեց նաև, որ Արցախի գիտական կենտրոնում իրականացվող պայմանագրային գիտական թեմաների գերակշիռ մասի ղեկավարներն ու կատարողներն ԱրՊՀ դասախոսներն են, իսկ որոշներում ընդգրկված են նաև ասպիրանտներ ու մագիստրանտներ:

ԱրՊՀ հաջողված ձեռնարկումներից է այլ բուհերի ու կառույցների հետ համագործակցությունը: Ընդհանուր առմամբ առայսօր համալսարանը նման պայմանագրեր ունի շուրջ 40 բուհերի ու գիտական կառույցների հետ: Բուհերի հետ համագործակցությունը դրսևորվել է փոխադարձ այցելությունների, ուսումնամեթոդական նյութերի փոխանակման, նոր գրականության տրամադրման, դասախոսությունների վարման, գիտաժողովների և հոբելյանական տարեդարձերին նվիրված միջոցառումներին ակտիվ մասնակցության, ուսանողական կառույցների ակտիվ գործակցության, ամառային հանգստի կազմակերպման և այլ ձևերով: Համագործակցության նոր մոտեցում կարելի է համարել ԱրՊՀ ուսանողների մեկշաբաթյա դասընթացները

ՀՀ բուհերում: Անճախադեպ էր երեք ուսանողի մեկամյա ուսումնառության կազմակերպումն արտասահմանում՝ Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանում:

2018թ. համալսարանի դրամական եկամուտները կազմել են 984,9մլն դրամ, որի 80%-ը ծախսվել է աշխատավարձերի վրա: 2019թ. ֆինանսական տարվա ծախսերի նախահաշիվը նախորդ տարվա համեմատ նվազել է շուրջ 18,9 մլն դրամով կամ 1,8%-ով:

Իրենց ելույթներում համալսարանականները որպես կարևոր ձեռքբերում մատնանշեցին բուհական գործընթացը կարգավորող ներքին նորմատիվային փաստաթղթերի փաթեթի ձևավորումը, որը լուրջ հիմք կհանդիսանա համալսարանի հավատարմագրման աշխատանքների համար: Ընդգծվեց, որ համալսարանը թևակոխում է նոր՝ հավատարմագրման փուլ, որն առաջադրում է նոր խնդիրներ կրթական ծրագրերի բարելավման ուղղությամբ, պահանջում է վեր կանգնած լինել նախորդ տարիների աշխատանքի մակարդակից, և իրենք պատրաստ են դրան:

Իր նկատառումները հայտնելով՝ խորհրդի նախագահ Գ. Մարտիրոսյանը կարևորեց ուսանողներին խրախուսելու միջոցները՝ ասելով, որ դրանք պետք է ընդլայնել և հարկ եղած դեպքում լրացուցիչ միջոցներ հայթայթել. բոլոր աշխատանքների հիմքում պետք է դրված լինի կրթության որակի բարձրացումը: Խորհրդի անդամները համալսարանի հաշվետու տարվա գործունեությունը գնահատեցին բավարար:

Բավարար գնահատվեց նաև 2018թ. համալսարանի բյուջեի կատարողականը, հաստատվեց 2019-ի եկամուտների ու ծախսերի նախահաշիվը: Հավանության արժանացավ ԱրՊՀ 2019-2023թթ. ռազմավարական ծրագիրը, որը ներկայացրեց ռեկտոր Ա. Սարգսյանը: Նոր ռազմավարական ծրագիրը նախորդից տարբերվում է նրանով, որ այն ոչ թե համալսարանի տեսլականն է ներկայացնում՝ միջազգային չափանիշներին համապատասխանող բուհի պատկերը, այլ, ընդունելով սինգապուրյան օրինակը, համալսարանը ներկայացրել է որպես սովորող կազմակերպություն, որը հինգ տարվա ընթացքում պետք է անընդհատ սովորի՝ իր կարողություններին, հնարավորություններին համեմատ իրականացնելով իր առջև դրված խնդիրները:

Կրթության, գիտության և սպորտի նախարար Ն. Աղաբալյանն ընդհանուր առմամբ դրական գնահատեց կատարված աշխատանքները, ընդգծեց, որ մեծ ուշադրություն է դարձվել սոցիալական տարբեր խմբերին աջակցությանը՝ նկատելով նաև, որ համալսարանում գործող զեղչային համակարգը միշտ չէ, որ դրական ազդեցություն է ունենում ուսման որակի վրա. կամ մեծ ներուժով երիտասարդներ, որոնք, զուտ սոցիալական աջակցության խնդրով պայմանավորված, զրկված են մոտիվացիայից, ինչն անդրադառնում է նրանց ուսման որակի վրա: Նախարարն առաջարկեց վերանայել և՛ զեղչային, և՛ աջակցության համակարգը, ավելի շատ խրախուսել ուսանողներին՝ մասնակցելու տարբեր ծրագրերի, ուսանողական թռչակների մրցույթների: Այսպես, Հայ կրթական հիմնարկության բազմաթիվ կրթաթոշակների համար կան մրցույթներ, որոնց հնարավոր

ություն ունեն մասնակցել նաև արցախցի ուսանողները: Պարզապես պետք է նրանց հետ աշխատել և ուղղորդել՝ հավակնելու այդ կրթաթոշակներին, ինչը լրացուցիչ շահագրգռություն կստեղծի ավելի լավ սովորելու, ավելի առաջադիմելու, ու նաև հնարավոր կլինի ստեղծել կապեր այլ բուհերի հետ փոխանակման ծրագրերի համար:

ԱրՊՀ խորհրդի նախագահ Գ. Մարտիրոսյանը կիսեց նախարարի առաջարկությունը՝ ուսանողներին աջակցելու գաղափարը կապել նրանց առաջադիմության, ակտիվության կամ որոշակի ձեռքբերումների հետ՝ ասելով, որ ընդհանուր առմամբ սա ճիշտ մոտեցում է, բայց հստակ ձևով պետք է կանոնակարգվի, և որոշակի սկզբունքներ որոշվեն: Իր հերթին նա առաջարկեց խորհրդի մակարդակով կամ որևէ այլ հարթակում քննարկում կազմակերպել այդ հարցի շուրջ թեկուզ նախատեսված գումարի շրջանակներում (մոտեցման հարց է), անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարել:

Ուսանողներին, մասնավորապես ՊԲ սպաների երեխաներին տրվող արտոնությունների վերաբերյալ հնչեց մեկ այլ առաջարկություն. այդ երեխաները սովորում են անվճար՝ անկախ ակադեմիական առաջադիմությունից, ինչը բերել է առաջադիմության նվազման: Օրենքում անգամ զոհված զինծառայողների ուսանող երեխաների զեղչերն են կապված առաջադիմության հետ, և նույն մոտեցումը պետք է լինի նաև սպաների երեխաների նկատմամբ: Խորհրդի նախագահը կարծիք հայտնեց, որ ելակետային տվյալների համար պետք է հաշվի առնվի սոցիալական վիճակը, բայց հետագայում որոշիչը պետք է լինի առաջադիմությունը, այսինքն՝ սոցիալական կարգավիճակը չլինի միակ բացարձակ որոշող գործոնը: Բայց դա պետք է առանձին քննարկել և հստակեցնել:

ԿԳՍ նախարարությունը նախորդ տարիներին հաստատված ավանդույթի համաձայն հայտարարել էր «Տարվա լավագույն ուսանող» մրցույթ: Խորհրդի նիստում տեղի ունեցավ 2017-2018 ուստարում հանրապետությունում լավագույն ուսանող ճանաչված ուսանողների պարգևատրման արարողություն: Նախարար Ն. Աղաբալյանը դիպլոմով և դրամական պարգևով պարգևատրեց ԱրՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի բակալավորիատի ֆինանսեր մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Դիանա Խաչատրյանին՝ մրցույթի հանրապետական փուլում հաղթող ճանաչվելու համար և «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտի բակալավորիատի դիզայն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Արտաշես Պետրոսյանին՝ մրցույթի «Մասնագիտական ձեռքբերումներ և հասարակական ակտիվություն» անվանակարգում բարձր արդյունքներ ցուցաբերելու համար:


ԱրՊՀ գիտխորհրդի որոշմամբ համալսարանի Ոսկե մեդալով պարգևատրվեց ԱՀ ազգային վիճակագրական ծառայության պետ, նախկին ռեկտոր Մանուշ Մինասյանը՝ համալսարանի զարգացման գործում ունեցած ներդրման համար:

Նիստը եզրափակիչ խոսքով ամփոփեց խորհրդի նախագահ Գ. Մարտիրոսյանը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

խոսք հիշատակի

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵԾ ԲԱՐԵԿԱՍԸ



Կյանքից հեռացավ Կիմ Բակչին՝ Նշանավոր գրող, հրապարակախոս, կինոդրամատուրգ:

50 տարուց ավելի նա հայ ժողովրդի հետ էր, և դա նրա համար սուրբ գործ էր: Հայ ժողովրդի մասին Բակչին 7 գիրք է գրել, հեղինակ է ավելի քան 50 վավերագրական և գիտահանրամատչելի ֆիլմերի, զբաղվել է Հայաստանի հնագույն և ժամանակակից մշակույթի՝ Մատենադարանում, աշխարհի տարբեր գրադարաններում պահպանվող ձեռագիր մատյանների, հին գրքերի ուսումնասիրությամբ:

Կիմ Բակչին ՀՀ գրողների միության Հոկտ. Թումանյանի անվան, ինչպես և Ֆրիտյոֆ Նանսենի անվան միջազգային մրցանակների դափնեկիր է: Նա հաճախակի սիրով այցելում էր Արցախ, այստեղ ավանդաբար անցկացվող Ռուսական խոսքի օրերի հյուրն էր:


Մենք՝ արցախցիներս, շնորհակալ ենք, որ եղել ենք նրա ընկերը, ժամանակակիցը, նրա տաղանդի կենդանի վկաները: Երախտապարտ ենք մեր ժողովրդի պատմությունը, անցած ճանապարհն արժևորելու, ճիշտ գնահատելու համար:

Իր հարցազրույցներից մեկում Բակչին նշել է, որ Արցախում ռուսաց լեզուն բարձր որակ ունի. և՛ կրթության մակարդակում, և՛ դպրոցների տնօրեններն ու ուսուցիչներն ամեն ինչ անում են՝ այն պահպանելու համար:

Սա մանկավարժի աշխատանքի ամենամեծ գնահատականն է, որ տվել է հայ ժողովրդի բարեկամը: Արցախն իր վշտակցությունն է հայտնում սիրելի գրողի՝ Կիմ Բակչիի մահվան կապակցությամբ:

Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն

ՎԱՆԵՐԻ ՍՄՎԵԼԻ ՍԱՆՎԵՍՆ



Կյանքից հեռացավ վաստակավոր մանկավարժ Վանելի Սանվելի Սահակյանը:

Ծնվել է 1949 թվականի օգոստոսի 1-ին Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղում: 1965թ. ավարտել է Մատաղիսի 8-ամյա դպրոցը, միջնակարգ կրթություն ստացել Մարտակերտի շրջանի Թալիչ գյուղում: 1973-ին ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի բաժինը:

1973-1977թթ. որպես մաթեմատիկայի ուսուցիչ աշխատել է Թալիչի միջնակարգ դպրոցում: 1977-1979թթ. որպես ավագ տնտեսագետ աշխատել է վիճակագրության վարչությունում: 1979-1985թթ. որպես տեսուչ է աշխատել Ստեփանակերտի քաղաքային ժողկրթբաժնում: 1987-1999թթ. զբաղեցրել է Ստեփանակերտի Հ. Թումանյանի անվան հ.9 միջնակարգ դպրոցի, 2008-ից մինչև 2012 թվականը՝ Ստեփանակերտի հ.8 միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնը: 2012 թվականից զբաղեցրել է Արցախի կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչության բաժնի պետի պաշտոնը:

2015-ից մինչև 2017 թվականը աշխատել է Արցախի ԿԳՍ նախարարության գնահատման և թեստավորման կենտրոնում՝ որպես քննական առաջադրանքների մշակման և մեթոդական օժանդակության մասնագետ:

Անբասիր աշխատանքի, անխոնջ աշխատասիրության և գործին անձնուրաց նվիրումի համար բազմաժանր մանկավարժ բարձր է գնահատվել մանկավարժների, աշակերտական ու ծնողական հանրույթների կողմից: Արժանացել է Արցախի վաստակավոր մանկավարժի կոչման:

Հարգված մանկավարժի, հայրենամուտ մտավորականի հիշատակը վառ կմնա բոլոր նրան ճանաչողների սրտերում:

Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը վշտակցություն ու զորակցություն է հայտնում Սահակյանների ընտանիքին՝ հանգրվանում մաղթելով հանգուցյալի հարազատներին ու մերձավորներին:

Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն

ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՆԱԽԱԴՊՐՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ, ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

1 Բանախոսներից առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության գլխավոր մասնագետ Երանուհի Գալստյանը, անդրադառնալով նախադպրոցական և դպրոցական ուղղորդման երեխաների սննդի կազմակերպմանը, ասաց, որ հարցի վերաբերյալ 2013թ. ԱՆ կողմից մշակվել են նախադպրոցական հիմնարկներում առողջ սննդի կազմակերպման սանիտարական նորմեր ու կանոններ, որոնցով էլ առաջնորդվում է տեսչությունը: Հավաստեց, որ, իրոք, երեխաների սննդի բարելավման անհրաժեշտություն ամբողջ հանրապետությունում կա: Ընդհանրապես մարդկանց մոտ որոշ հիվանդություններ պայմանավորված են մանկական հասակում նրանց սննդի ոչ ճիշտ կազմակերպմամբ: Ըստ նրա՝ ինչ կորցնում ենք այսօր երեխաների վաղ հասակում, հետագայում վերականգնել չենք կարող: Համաշխարհային վիճակագրությունը ցույց է տալիս, որ մանկական մահացությունների 35-40 տոկոսը հետևանք է թերսնուցման: Այն պատճառ է դառնում թերաճի, իսկ սխալ սնուցումը՝ գերաճի: Երկուսն էլ հետագայում պատճառ կարող են դառնալ այնպիսի հիվանդությունների, ինչպես՝ շաքարային դիաբետը, սակավարյունությունը, սրտի անբավարարությունը և այլն: Միայն սնուցման մեջ մա ճշեց սպիտակուցներով պակաս, վիտամիններով, հանքային տարրերով չհագեցած սնունդ ստանալը: ԱՆ վերոհիշյալ ծառայության կողմից բավական աշխատանք է տարվում մանկապարտեզներում սննդի էներգետիկ արժեքը նորմայի սահմաններում պահելու ուղղությամբ: 3-6 տարեկան երեխաները պետք է ստանան 1800 կիլոկալորիա, որից 1350 կկալը մանկապարտեզներում հիմնականում ապահովված է (450 կկալը ստանում են ընթրիքին՝ տանը): Ոչ նորմալ փաստը, որին առնչվում է վերահսկող կազմակերպությունը, սննդի մեջ մտնող տարրերի՝ սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի ոչ ճիշտ հարաբերակցությունն է: Մասնագետի դիտարկմամբ՝ ավելի հաճախ երեխաների կալորիաներն ապահովվում են ածխաջրերի՝ հացաբուլկեղենի, քաղցրավենիքի հաշվին, ինչը սխալ սնուցում է:

միջ համապատասխան տեղեկանքի ուղեկցումով, օգտագործել՝ պատճառաբանելով, որ դրանք անասնաբուժական լաբորատոր փորձաքննություն չեն անցել, ինչը գյուղական բնակավայրերում ամեն օր հնարավոր չէ կազմակերպել, քանի որ այդպիսի լաբորատորիաներ գործում են միայն շրջկենտրոններում: ՀՕՄ-ի «Սոսե» մանկապարտեզների աշխատանքները համակարգող Արտեմիս Գրիգորյանն իրավացիորեն զարմացած է. ամբողջ աշխարհում քարոզվում է բիոսնունդը, նրանց հովանավորներն էլ են դա պահանջում, իսկ Արցախի գյուղերի մանկապարտեզներին դա արգելվում է: Բացի այդ, գյուղմթերքը տեղում իրացնելով չէ՝ որ մապատում են գյուղացիների աշխատանքի խրախուսմանը, համայնքների զարգացմանը: Սննդի անվտանգության տես-

Նախարարը մտահոգված է նաև, թե սննդի ինչ չափաբաժին են ստանում երեխաները տանը ընթրիքին. արդյո՞ք նրանց անհրաժեշտ կալորիան ապահովված է: Այդ կապակցությամբ ԱՆ տեսչության գլխավոր մասնագետ Ե. Գալստյանը պատասխանեց, որ ծնողների կապը մանկապարտեզի հետ խիստ անհրաժեշտություն է: Ընտանիքների հետ կապում դիտարկվում է երկու կողմ. կան ընտանիքներ, որոնցում երեխաները չեն ստանում այն, ինչ՝ մանկապարտեզում, և մասն ընտանիքների համար մանկապարտեզը փրկություն է: Դրա համար պարտադիր է, որ մանկապարտեզի երեքանգամյա սնունդը լինի առավելագույնս լավ: Կան ընտանիքներ էլ, որոնք կարող են հրաժարվել որոշ սննդամթերքից՝ երեխայի ավերգիլ լինելու պատճառով: Տնօրեններն այդ մասնում մասնություններին տեղյակ են ու այդ նրբությունները հաշվի են առնում:

Նախարարության մշտադիտարկումը սննդի հետ կապված մեկ այլ խնդիր էլ է բացահայտել. երեխաները բավարար չափով կան ընդհանրապես բանջարեղեն չեն ստանում: Մանկապարտեզի տնօրենների պատճառաբանումին, թե այդ մթերքներում միտրախոնդի տոկոսը բարձր է, սննդի անվտանգության տեսչության պետ Ռ. Առուստամյանը պատասխանեց, որ սննդի ծառայությունում գործող բուսասանիտարական տեսչությունը

դիրների հնարավոր է լուծում տալ միջգերատեսչական համագործակցության արդյունքում, ասաց Ն. Արաբալյանը, ինչի ուղղությամբ էլ կծավալեն աշխատանքները: Նա առաջարկեց մանկապարտեզների ղեկավարներին խնդիրներն առանձին ներկայացնել, որպեսզի կոնկրետ գյուղերի համար մասնաձևին քննարկում անեն: Երկի թե դրանց մի մասի լուծումը լրացուցիչ ծախսերի հետ կապված լինի, և մասնագետների խնդիր առաջանա, որոշ դեպքերում օրենսդրական փոփոխությունների կարիք լինի: Ամեն դեպքում խնդիրը պետք է քննարկվի պատկան մարմինների հետ:

Ընդմիջումից հետո թիմային գործնական հետաքրքիր աշխատանք ծավալվեց դասընթացի մասնակիցների հետ: Ամերիկյան համալսարանից դասընթացավար Արտակ Ալոյանը անցկացրեց թրենինգ «Աշխատանքային էթիկա, միջամտման կոնֆլիկտների լուծում» թեմայով: Խմբերը ներկայացրին մանկապարտեզներում հանդիպող կոնֆլիկտային իրավիճակների վերաբերյալ նախարարության կազմած հարցաշարերի շուրջ լուծման սեփական տարբերակները, պատասխանեցին նախարարության գրավոր հարցումին և ներկայացրին իրենց առաջարկությունները:

Թրենինգն անցավ հետևյալ իրավիճակների շուրջ: Դրանք իրավիճակներ են, որոնք հանդիպում են գրեթե բոլոր մանկապարտեզներում:

1. Մանկապարտեզում կես դրույթով աշխատող դաստիարակներից մեկը գնում է ֆիզարձակորդ: Ազատված տեղի համար պայքարում են ինչպես աշխատակիցները, այնպես էլ սոցիալապես անապահով քաղաքացիներ: Ի՞նչ որոշում պետք է կայացնի մանկապարտեզի տնօրենը:

2. Երեխաներին առավոտյան ընդունելու ժամանակ դաստիարակին մոտենում է ծնող և մեծ աղմուկ առաջացնում՝ վիրավորանք հասցնելով նրան: Պատճառը դաստիարակի անբարեհաճ վերաբերմունքն է երեխայի նկատմամբ: Ի՞նչ է ձեռնարկում տնօրենը:

3. Տնօրենը աշխատանքի է նշանակվել մի մանկապարտեզում, որտեղ կոլեկտիվը մասնատված է: Խմբավորումների լարված հարաբերություններն ազդում են միջամտման շփոթման վրա. ի՞նչ քայլեր է ձեռնարկում նորանշանակ տնօրենը:

4. Տնօրենը համոզվում է, որ մանկապարտեզի մեթոդիստը ոչ թե խմբերում լուսավորչական աշխատանքներ է իրականացնում, այլ բամբասում է տնօրենին: Ի՞նչ է ձեռնարկում վերջինս:

5. Դաստիարակներից մեկն ակնհայտ անբարեհաճ վերաբերմունք է դրսևորում տնօրենի նկատմամբ և խանգարում ժողովի ընթացքին: Ի՞նչ է անում տնօրենը:

6. Կոլեկտիվում առաջացել են խմբավորումներ: Ի՞նչ քայլեր է ձեռնարկում տնօրենը:

7. Մանկապարտեզում մեկ թափուր տեղի համար դիմել են մի քանի դիմորդներ, որոնցից անցել է 3-ը: Նրանք ունեն բացարձակապես նույն որակավորումը՝ համապատասխան կրթություն և նույն աշխատանքային փորձը: Ո՞ր մեկին կընտրի բաժինը:

8. Որո՞նք են լավագույն մանկապարտեզի չափանիշները, ինչո՞ւ:

9. Տնօրենը համոզվում է, որ դաստիարակը կամ մի քանի դաստիարակներ պետական ծրագրով չեն առաջնորդվում և պարապմունք չեն անում: Ի՞նչ է անում տնօրենը:

10. Տնօրենը ակնհայտ կողմնապահություն է ցուցաբերում որոշ աշխատակիցների նկատմամբ: Այդ փաստը, բնականաբար, առաջացնում է լարվածություն: Ի՞նչը պետք է փոփոխվի տնօրենը: Ի՞նչ պետք է անեն աշխատողները:



«Անվտանգ սնունդ՝ առողջ մանուկ» թեմայով զեկուցումով հանդես եկած ԱՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության սննդամթերքի անվտանգության որակի և օպերատիվ հսկողության տեսչության գլխավոր մասնագետ Միսիթա Լառաբեյանը ներկայացրեց հանրային սննդում անվտանգ և սանիտարական նորմերին համապատասխան սննդամթերք մատուցելու գործում ծառայության պահանջները:

Մանկապարտեզի տնօրենների բարձրացումը հարցերը վկայում թե առաջին և թե երկրորդ վերահսկողական ծառայությունների կողմից ներկայացվող որոշ պահանջներն իրականության հետ անհամապատասխան լինելու մասին: Այսպես, կառավարության կողմից մի քանի տարի առաջ սահմանվել էր մանկապարտեզի մեկ երեխային անհրաժեշտ օրական չափաբաժնի գումարը՝ 566 դրամ, սակայն դրանից հետո մի քանի անգամ ապրանքների քանակացում է եղել, և անհնար է ապահովել այդ գումարի սահմանում պահանջվող սննդակարգը: Օրենքը պահանջում է երեխայի սննդակարգում ամեն օր կաթ ներառել, բայց գործարանային արտադրության կաթնամթերքը շրջանների մանկապարտեզներ է առաքվում շաբաթը մեկ անգամ: Էլ չենք խոսում այն մասին, որ մատակարար կազմակերպությունների կաթնամթերք տեղափոխող մեքենաներն էլ ապահովված չեն սառնարանային պայմաններով, ինչը հատկապես ամռան եղանակին մթերքը փչանալու վտանգ է ստեղծում: Իսկ վերահսկող մարմինը չի թույլատրում տեղում արտադրվող գյուղմթերքը՝ միսը, կաթը, մածուցը, ձուկը, չնայած բժշկի կող-

ջության պետ Ռոբերտ Առուստամյանը, իդում անելով օրենքին, ասաց, որ առանց լաբորատոր փորձաքննության գյուղմթերքը չի կարելի օգտագործել: Անհեթեթությունը նաև այն է, որ այդ նույն երեխաները և ընտանիքի ոչ մանկապարտեզային տարիքի մյուս երեխաներն իրենց տանն օգտագործում են տնական կաթնամթերք, մսամթերք, ձու: Նույն տրամաբանությամբ արդյո՞ք այդ երեխաների առողջական խնդիրներն էլ չպետք է վերահսկվեն պատկան մարմինների կողմից:

Դասընթացին տնօրենները, առողջապահության նախարարության աշխատող փորձի փոխանակում կատարեցին՝ լուծելու դժվարագույն խնդիրը. ինչպես ապահովել երեխաներին անհրաժեշտ օրական 1800 կիլոկալորիան և կազմակերպել ճիշտ սնուցում՝ չխախտելով կանոնը:

ԿԳՄ նախարարն ասաց, որ կփորձեն հանդիպման ընթացքում վերահանել խնդիրները, որոնք առնչություն ունեն մյուս գերատեսչությունների հետ: «Ստեփանակերտից բերելով այդ կաթնամթերքը կամ մսամթերքը՝ չենք բացառում տեղական մթերքի օգտագործումը. եթե տեղական արտադրանքն օգտագործում ենք տանը, իսկապես պիտի մտածել, թե ինչ անենք, որ այն օգտագործվի նաև մանկապարտեզում: Այն, ինչ ասվում է ԱՆ, սննդի անվտանգության ծառայության կողմից, փորձենք պահպանել, միաժամանակ լրացուցիչ պայմաններ ստեղծել տեղում ավելի առողջ սնունդ ձեռք բերելու համար: Երկի դա լրացուցիչ ծախսերի հետ կապված կլինի, և կառաջանա մասնագետների խնդիր, բայց ամեն դեպքում սա խնդիր է, որը պետք է քննարկվի պատկան մարմինների հետ», - ասաց նա:

բանջարեղենի բոլոր խանութներում շաբաթը մեկ մայրաքաղաքում ստուգում է բանջարեղենի մեջ միտրախոնդի պարունակությունը, և այն բավարարի սահմանում է: Այս տարվանից ծառայությանը տրամադրվել են տեսուչներ, ավելացել են աշխատողները, հետևաբար, մնան ստուգումներ կիրականացվեն նաև շրջաններում:

«ՌՊՈ սննդի անվտանգության տեսչության կողմից այդ վերահսկողությունն ավելի ուժեղացվի, ավելի շատ ներուժ ներգրավվի, և խրախուսվեն այն արտադրողները, ովքեր մաքուր մթերք են արտադրում: Մի կողմից սա հենց խրախուսում կլինի նրանց, մյուս կողմից կկարողանանք կազմակերպել երեխաների սնուցումն անվտանգ սննդամթերքով», - ասվածին արձագանքեց նախարարը:

Մեկ այլ զեկուցում էլ, որը ներկայացրեց համաճարակաբան Կարինե Բալայանը, նախադպրոցական հիմնարկներում հակահամաճարակային միջոցառումներին և ախտահանման ռեժիմին էր վերաբերում: Այստեղ էլ կան բազմաթիվ խնդիրներ. մասնավորապես՝ գյուղական մանկապարտեզների բժշկական վերահսկողությունը դրված է գյուղի բուժքրոջ վրա, որը ծանրաբեռնվածության պատճառով չի վիճակի չէ լիարժեք կատարել պարտականությունները (երեխաների աճին հետևելու համար պակասում են որոշ գործիքներ): Ամենաճակատ հարցը մայրաքաղաքում խմբերի գերծանրաբեռնվածությունն է, որը հակասում է սանիտարահիգիենիկ նորմերին:

Առանց պատվաստման աշխատող և երեխա չպետք է ընդունել մանկապարտեզ, պարզապես մասնագետը:

Հանդիպմանը վերհանված բազմաթիվ խն-

ՀԱՐՑՈՒՄ

ԿԱՐԾԻՔՆԵՐ, ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարցմանը մասնակցել են դասընթացի 76 մասնակիցներից 53-ը:

1. Դասընթացի ծրագիրը - 9,6

Մասնակիցների մեծամասնությունը դրական է գնահատել ծրագիրը՝ այն բնորոշելով հետաքրքիր, կարևոր, արդյունավետ, քանի որ կային նախադպրոցական տարիքի երեխաների սննդի և առողջ ապրելակերպի, հիգիենայի վերաբերյալ հարցեր:

«Ուղղունելի են նման ծրագրերը, որոնք երկար ժամանակ չկային, և քվում էր, թե մեզ այլևս մասնակից չեն դարձնում նմանատիպ սեմինարներին»:

«Կարիճե Բալայանի ելույթը վերաբերում էր միայն Ստեփանակերտի և շրջակայքում գտնվող մանկապարտեզներին, քանի որ այլուր դեր ուներ երեխաների բուժզննումը բացակայում է»:

Առաջարկություններ

«Համաճարակաբանի փոխարեն լավ կլիներ տեսնել ներկայացուցիչ ֆինանսների նախարարությունից, քանի որ շատ թերի հարցեր կան այդ ոլորտում»:

«Առողջապահության նախարարությունը թող ներկայացնի տասնօրյա ճաշացուցակ»:

2. Լիազուճար միստը - 9,4

Լիազուճար միստը դասընթացի մասնակիցները գնահատեցին գերազանց՝ բնութագրելով, որ այն ընթացավ ջերմ մթնոլորտում, նպատակային և ուսուցողական:

«Լինելով բազմամյա մանկավարժական փորձ ունեցող մասնագետ՝ տիկին Ի. Գրիգորյանը ստեղծեց հաճելի մթնոլորտ, և տրամադրված ժամանակն անցավ շատ արագ»:

«Ոգևորված են բանախոսների հետ հարց ու պատասխանի փուլում մեր նախարարի միջամտությամբ»:

«Ուղղունելի է, և կցանկանայի, որ այսպիսի դասընթացների կազմակերպումը լինի շարունակական, քանի որ ինչքան աշխատենք, էլի պարտավոր ենք սովորել, անընդհատ կատարելագործվել ու վերապատրաստվել համուն մեր երեխաների»:

«Սննդի նորմերի հետ ստացանք մեզ հուզող հարցերի պատասխանները»:

Առաջարկություններ

«Կոնկրետացնել ճաշացուցակի պարզաբանումը: Համաճարակաբանի ելույթից ոչինչ չհասկացա»:

«Խնդրում ենք անդրադառնալ տեղական բնական մթերքի ձեռքբերման հարցին»:

«Նիստում առաջ քաշված հարցերի մի մասին փորձառու տնօրենները քաջածանոթ էին, սկսնակների համար կարճատև գեկուցումը բավարար չէր, իսկ փորձի փոխանակման իմաստով քննարկումն ավելի արդյունավետ կընթանար, եթե ավելի հաջողված փորձը (փորձառու տնօրենների) նախապես ուսումնասիրվեր և երաշխավորվեր ԿԳՄ-ի կողմից՝ որպես օրինակելի»:

3. «Աշխատանքային էթիկա, միջանձնային կոնֆլիկտների լուծում» դասընթաց - 9,4

Մեծամասնությունն այն կարծիքին էր, որ դասընթացը շատ հետաքրքիր է, ուսանելի, դրվատելի, ինֆորմատիվ, այն չափազանց անհրաժեշտ էր, քանի որ մի շարք մանկապարտեզներում առկա են նման խնդիրներ:

«Դասընթացին ձեռք բերեցի այնպիսի փորձ, որ հետագայում կկիրառեմ նաև կոլեկտիվում»:

«Դասընթացի ժամանակ հանդիպեցինք շատ կոնֆլիկտային իրավիճակների, որի պատասխանը գտանք խմբային աշխատանքում և, հետագա աշխատանքային պրակտիկայում հանդիպելով այդ կոնֆլիկտներին, կարող ենք ավելի հեշտ լուծել դրանք»:

«Փորձված տեսակետներ էին, բայց առողջ մթնոլորտ ապահովող տիկին Գրիգորյանը ևս մեկ անգամ հիացրեց՝ խնդիրներին տալով ավելի արդիական լուծումներ»:

«Շատ հետաքրքիր էին հաղորդակցության դասընթացավար Արտակ Ալոյանի առաջարկած թեստերը, որոնց միջոցով մենք ինքներս մեզ գնահատեցինք, որոշեցինք մեր ոճն ընդհարումներ կառավարելու: Այդ հարցերը քննարկեցինք ընդհանուր խմբում»:

4. Խմբային աշխատանք - 9,6

Մասնակիցները ողջունեցին խմբային աշխատանքը:

«Խմբային աշխատանքը թույլ է տալիս լսել դիմացիցին, հաշվի առնել նրա կարծիքը և կայացնել ընդհանուր որոշում»:

«Վեց հոգանոց խմբում աշխատել, լսել միմյանց, հաշվի առնել բոլորի կարծիքը, գտնել ընդհանուր ընդունելի որոշում՝ շատ հետաքրքիր է»:

«Ինձ շատ դուր եկան համագործակցային մոտեցումները խմբի բոլոր անդամների կողմից և նոր մտքերի փոխանակումն ավագ սերնդի հետ խմբային աշխատանքի ժամանակ»:

«Խմբային աշխատանքը թույլ տվեց մի սեղանի շուրջ մտքերի փոխանակում կատարել, գտնել ճիշտ պատասխանները և ներկայացնել»:

Առաջարկություն

«ԱՀ ԱՆ դիետոլոգներին առաջարկեք կազմել օրինակելի ճաշացանկ 10 օրվա համար»:

Մասնակիցները նշեցին, որ դասընթացի ժամանակ սովորել են՝

- կոլեկտիվ դեկավարման ժամանակ զսպվածությունն ու համբերությունը առաջնային տեղում պետք է լինեն,
- սխալներից անել հետևություններ, երբեք չպարտադրել կարծիքը ուրիշներին, գնահատել դիմացիցի կարծիքը,
- կոնֆլիկտային իրադրություններում պետք է լինել զիջող,
- սննդի գրագետ կազմակերպմանն առնչվող մի շարք հարցերի վերաբերյալ՝ գործնական մանրամասներ (հետճաշիկի կազմակերպումը),
- պրոբլեմներն ավելի հեշտ ու ճիշտ լուծելու ուղիները,
- որ մենք իրարից սովորելու շատ բան ունենք,
- որոշումներ կայացնելու գործընթացը կազմակերպել ճիշտ, տալ դրանց իրավական և ընդունելի լուծումներ:

Իմացել են, որ՝

- տնօրենը պետք է լինի օրինակելի, որպեսզի օրինակ ծառայի շրջապատին,
- կոնֆլիկտային իրավիճակում պետք է փոխել դիրքը, որպեսզի հարթվի կոնֆլիկտը,
- ԱՀ ԿԳՄ նախարարությունում կան մարդիկ, ովքեր միշտ մտածում են և պատրաստակամ են ուղղորդել տնօրեններին,
- յուրաքանչյուր մասնագետ պետք է համագործակցի մասնագետի հետ,
- բոլոր մանկապարտեզներում առկա են նմանատիպ խնդիրներ,
- անձնական գործերում պետք է լինի պատվաստումների մասին քաղվածք (քննարկման կարիք ունի),
- ինչպիսի սնունդ պետք է տալ երեխաներին,
- նմանատիպ շփումներն օգտակար են,
- կարող են ելույթ ունենալ հանրության առջև,
- կան էթիկայի շփման նորմեր, որոնց ճիշտ օգտագործման արդյունքում ունենում են գեղեցիկ, առողջ կոլեկտիվ և միջավայր,
- յուրաքանչյուր պրոբլեմատիկ իրավիճակում հարցը կարող է կարգավորվել տնօրենի ներողամտության և անհատական գրույցների միջոցով,
- այսպես կոչված «շնամուկ» են և հետագայում տարբեր իրավիճակներում հիշելով դա՝ պետք է փորձեն փոխել իրենց

եւթյունը:

Զարմացած էին, որ՝

- բոլորը համբերատար, առանց տրտնջալու անցկացրին դասընթացը,
- չնկատեցին, թե ինչպես է ժամանակն անցել, քանի որ ջերմ մթնոլորտ էր տիրում,
- հնարավորություն ունեցան քննարկել իրենց տեսակետները գործընկերների հետ,
- պետության կողմից կազմակերպված միջոցառումն այդքան կիրառական էր և հետաքրքիր,
- կարճ ժամանակում հնարավոր էր հասնել խմբային աշխատանքի զգալի ձեռքբերումների,
- սննդի անվտանգության ծառայության աշխատողները բավարար չափով զինված չէին ինֆորմացիայով,
- երիտասարդ տնօրեններն ավելի համարձակ էին իրենց տեսակետները ներկայացնելիս,
- շատերը, զբաղեցնելով պաշտոն, բավարար չափով գրագետ չեն,
- ԱՀ ԿԳՄ նախարարը տնօրենների

ուշադրություն չդարձվեց վերականգնելուն, չի խոսվել աշխատավարձերի, հատկապես տնօրենների աշխատավարձի մասին, որը շատ քիչ է,

Դասընթացի մասնակիցները ամենակարևորը համարում էին այն, որ՝

- երեխաները մեծաման առողջ մթնոլորտում,
 - նոր ընկերներ և գիտելիքներ են ձեռք բերել,
 - շատ նորություններ և տեղեկություններ ստացան մարդկային շփման հարաբերություններում,
 - «Սոսե» մանկապարտեզների տնօրենները նույնպես հրավիրվել էին այս միջոցառմանը,
 - հանդիպումը հնարավորություն կտա խնդիրները հարթել՝ օգտագործելով մյուս տնօրենների առաջարկները, խորհուրդները,
 - ԱՀ ԿԳՄ նախարարությունը մանկապարտեզների հիմնական խնդիրներով մտահոգվելու և հուզող հարցերին լուծում տալու պատրաստակամություն ունի,
 - մեր պետության և նախարարության ուշադրության կենտրոնում է նախադպրոցական կրթության դերի բարձրացումը,
 - ծանոթացան ոլորտում աշխատող տարբեր պատասխանատուների հետ և կարծիքներ փոխանակեցին,
 - քննարկեցին նախադպրոցական տարիքի երեխաների ճիշտ սննդակարգը և հիգիենան,
 - ծանոթացան և շփվեցին Իրինա Գրիգորյանի հետ, կատարեցին փորձի փոխանակում մյուս տնօրենների հետ,
 - մասնակիցների մեծ մասն իր գործին վերաբերվում է մեծ պատասխանատվությամբ և նվիրումով. դա պարզվեց շփումների ժամանակ,
 - կարողացան ամրապնդել իրենց գիտելիքները,
 - ստացան հուզող հարցերի պատասխանները,
 - ծանոթացան տարբեր շրջանների խնդիրներին, հաղորդակցվեցին մասնագետների հետ,
 - բոլորս էլ մեկ նպատակ ենք հետապնդում՝ անել հնարավոր ամեն ինչ՝ մատաղ սերնդին ճիշտ դաստիարակելու,
 - բոլոր տնօրենների համար հնարավորություն ստեղծվեց ծանոթանալ միմյանց հետ,
 - լսեցին նախարարին, շփվեցին Իրինա Գրիգորյանի հետ,
 - կարողացան փորձի փոխանակում անել,
 - կարողացան շփվել և հաղորդակցվել միմյանց հետ:
- Դասընթացի մասնակիցները նշեցին, որ իրենց աշխատանքում օգտագործելու են՝
- ձեռք բերած նոր մեթոդներն ու մոտեցումները,
 - հոգեբանական թեստը,
 - «առողջ մթնոլորտ» ապահովելու գաղափարը,
 - կրեատիվ մտքերը և խմբային աշխատանքի ընթացքում ստացած բոլոր հարցերի պատասխանները,
 - հետճաշիկի կազմակերպման ավելի արդյունավետ ուղիները,
 - թեստային առաջադրանքները,
 - մտերմիկ մթնոլորտ ստեղծելու կարողությունները,
 - դասընթացի ժամանակ քաղած այն հետաքրքիր նկատառումները, որոնք կարող են նպաստել առողջ կոլեկտիվի պահպանմանը:



համար կազմակերպել է այսպիսի հիանալի ընդունելություն և համբերատար լսում ու պատասխանում էր հուզող հարցերին:

Դուր եկավ՝

- սեմինարը՝ իր ծրագրով,
- առողջ և համերաշխ մթնոլորտում կազմակերպված բարձրակարգ կոլեկտիվ աշխատանքը,
- նման ձևաչափով աշխատելը,
- նոր գործընկերների հետ շփումը, անմիջական միջավայրը և շփումը,
- որ հնարավորություն ունեցան ոչ միայն սովորել, այլ նաև սովորեցնել,
- որ բոլորն արտահայտում են իրենց կարծիքները, տեսակետները, իսկ ղեկավարներն իրենց օգտակար ցուցումներով ճիշտ ուղի էին մատնանշում,
- իրավիճակների քննարկումները,
- ամեն ինչ կազմակերպված էր բարձր մակարդակով,
- հաղորդակցության ձևերը,
- փորձի փոխանակումը,
- Իրինա Գրիգորյանի վերաբերմունքը, օրվա հաճելի մթնոլորտը,
- հոգեբանական թեստը և իրավիճակների խմբային քննարկումը,
- Արտակ Ալոյանի դասընթացը,
- դասընթացի ընթացքը, կազմակերպման ձևերը, նաև՝ բովանդակությունը:

Դասընթացի մասնակիցները հիմնականում գոհ ու բավարարված էին դասընթացից, սակայն որոշները նշեցին, որ հիասթափված են նրանից, որ՝

- որոշ տնօրեններ բացարձակապես անտարբեր էին,
- որոշ մասնագետներ իրենց կարևոր առաքելության վերաբերյալ հարցերին մոտենում էին կատակով կամ շատ մակերեսորեն,
- կան տնօրեններ, որոնք ունեն բազմաթիվ խնդիրներ, սակայն չմասնակցեցին հարց ու պատասխանին,
- մանկապարտեզի որոշ հաստիքների բացակայության թեման քիչ շոշափվեց,

31 ՏԱՐԻ ԱՌԱՋ

Իմ օրագրից

Այս օրերին մեծ հետաքրքրությամբ եմ դիտում 31 տարի առաջ մեր մարզի փոքրկալից իրադարձությունների մասին հեռուստահաղորդումները, նաև մեծ սիրով ընթերցում մամուլում հրատարակվող նյութերն ու համեմատում օրագրումս գրառածների հետ:

Սրտիս մոտ եմ ընդունում ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեի անդամներ Սեմյոն Բաբայանի և Երջանկահիշատակ Վլադիմիր Թովմասյանի կողմից հրատարակված հոդվածները, որոնցում օբյեկտիվորեն է լուսաբանված մեր Շարժման պատմությունը:

Իմ կյանքի ընթացքում ինձ չեն պրոպագանդել՝ համոզված լինելով, որ մարդու կարծիքն իր մասին կոտորակի հայտարարում է: Բայց որքան հեռանում ենք 1988-ից, այնքան շատ աղավաղված տեղեկությունների եմ հանդիպում և ուրախանում եմ, որ Սեմյոն Բաբայանի պես անհատներ կան, որոնք ճշմարտությունն են գրում: «Այն ժամանակ, երբ գործադուլը շարունակվում էր արդեն 10 օրից ավելի, մարտի 1-ի զիջերը հրապարակում գտնվող ժողովրդին (որտեղ հիսուն հազարից ոչ պակաս մարդ էր հավաքվել) դիմեց Շարժման ճանաչված առաջնորդ Արկադի Մանուչարովը՝ շինանյութերի կոմբինատի դիրեկտորը: Նա առաջարկեց ստեղծել մի խումբ, որը կղեկավարեր Շարժումն ու կհամակարգեր մարզի իշխանության հետ ժողովրդի կարգը: Անմիջապես ցուցակ կազմվեց, որում ընդգրկվեցին ձեռնարկությունների տնօրեններն ու ներկայացուցիչները՝ ընդհանուր առմամբ ավելի քան 150 մարդ: Հետո որոշվեց խմբի մասնակիցների թիվը կրճատել մինչև 55 հոգի, որոնք հավաքվեցին «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագրության նկուղային հարկում...»: (Սեմյոն Բաբայան, «Տնօրենների խորհուրդը և «Կռունկ»-ը՝ ժողովրդական իշխանության մարմիններ» «ԱԱ», 26 օգոստոսի 2017թ.):

Գիշտ է, այդ օրը ես այդ 50 հազարից մեկն էի, չնայած օրագրումս գրել էի 80 հազար, կարծում եմ, հարգարժան Ս.Բաբայանն ավելի ստույգ գիտեր: Լսելով Մանուչարովի հայտարարությունը, որ յուրաքանչյուր ձեռնարկությունից մեկ կամ երկու թեկնածուի անուն-ազգանուն ներկայացվի, ես հրապարակում փնտրեցի իմ գործընկերներին: Հանդիպելով մաթեմատիկայի ուսուցչուհի Ս. Կարապետյանին և ֆիզիկոս Սլավիկ Մելքոնյանին՝ պայմանավորվեցիք, որ 9-րդ միջնակարգ դպրոցից ներկայացուցիչ ընտրենք կենսաբանության ուսուցիչ Ռոբերտ Բաղդասարյանին, ու նրա անունը գրեցի մի թղթակտորի վրա և ուղարկեցի ամբիոն:

Տունս հրապարակի մոտ էր, և ինչպես միշտ, այդ օրն էլ շատ հյուրեր ունեի գյուղերից, ուստի որոշեցի գնալ տուն: Հատ չանցած՝ մեր տուն եկան դպրոցի ուսնավար Սերժիկ Շահնազարյանը և Բորիս Բաղդյանը ու ինձ հայտնեցին. «Հենց նոր հրապարակում մեր Շարժումը ղեկավարելու նպատակով կոմիտե է ընտրվել, որի կազմում մեր դպրոցից քեզ են առաջարկել: Կոմիտեն հավաքվել է թերթի խմբագրության ներքնահարկի ակումբում, շուտ գնա...»: Ես ասում եմ, որ Ռոբերտի թեկնածությունն եմ տվել, բայց նրանք պնդում են, որ ես պիտի ներկայանամ ու մասնակցեմ կոմիտեի գործունեությանը: Մտնում եմ դահլիճ: Նստելու տեղ չկար: Ռոբերտ Բաղդասարյանի հետ մի աթոռ ենք զբաղեցնում: Քննարկվում էր կահույքի ֆաբրիկայի դիրեկտորի թեկնածությունը: Տեղից բարձրանում է մի բանվոր և առաջարկում ցուցակից հանել նրա թեկնածությունը, բանի որ ֆաբրիկայի աշխատողներին թույլ չի տալիս, որ մասնակցեն գործադուլին, իսկ ես առաջարկում եմ հակառակը. կոմիտեի կազմում պետք է հեղինակավոր մարդիկ լինեն, ինչպիսին կահույքի ֆաբրիկայի դիրեկտորն է, որին ես ճանաչում եմ: Երբ հերթափոխային դպրոցի դիրեկտոր էր և տեսնում էի, թե նա ինչպես է հոգում իր բանվորների միջնակարգ կրթությունն ապահովելու մասին: Եվ անցնում

1989-Ի ՄԱՐՏԸ

է: Այնուհետև առաջարկում եմ, որ վաղը՝ մարտի 2-ին, Ս.Գորբաչովի ծննդյան օրն է, լավ կլինի հեռագրով շնորհավորենք, գուցե նա գթա և մեր հարցին լավ պջքով մայի: Ա.Մանուչարովը հավանություն է տալիս, ներկաները՝ նույնպես:

11 հոգուց բաղկացած կոմիտեի աշխատանքի բաժանում կատարելուց հետո գնում ենք հրապարակ: Ա.Մանուչարովը երկու հոգու հետ բարձրանում է մարզկոմի շենք՝ խորհրդակցելու մարզկոմի առաջին քարտուղար Հենրիխ Պողոսյանի հետ: Երկար սպասելուց հետո գալիս և հայտարարում է, որ հավաքված ժողովրդի անունից հեռագրել և շնորհավորել է Ս.Գորբաչովի ծնունդը, միաժամանակ դադարեցնում են գործադուլը և մարտի 3-ից կվերսկսեն ձեռնարկությունների աշխատանքը: Դա 1988թ. մարտի 1-ի լույս 2-ի զիջերն էր: Այժմ՝ 1989թ. մարտյան իրադարձությունների շուրջ:

1.03.1989թ.: Գիշերվա ժամը 2-ին տանկերով Կրկման է հասնում Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Արկադի Վոլսկին մի գեներալի ուղեկցությամբ՝ թուրքերի կողմից կազմակերպված հրավառություններին վերջ տալու:

2.03.1989թ.: Կրկմանի հայերն ու ադրբեջանցիները կրկին ընդհարվեցին, ուրգանցին Հատուկ կառավարման կոմիտեի անդամները: Միլիցիայի ուղեկցությամբ ադրբեջանցիներից ազդարկվեց չորս մարտական զենք՝ փամփուշտներով:

4.03.1989թ.: Ստեփանակերտի արտադրական ձեռնարկությունները թռուցիկներ տարածեցին, որոնցով կոչ էր արվում երկուշաբթի օրվանից վերսկսել գործադուլները՝ ի բողոք Հատուկ կառավարման կոմիտեի «ոչ ճիշտ աշխատածի»: Մտածում եմ, ո՞րն է «ոչ ճիշտը»: Ես տեղյակ եմ, որ Արկադի Վոլսկին, հունվարի 26-ին լինելով Բաքվում, իսկ 28-ին՝ Երևանում հանդիպելով երկու հանրապետությունների առաջին դեմքեր Վեգիորվի և Հարությունյանի հետ, գալով Ստեփանակերտ, այդ հանդիպումների ժամանակ ունեցած զրույցների մասին մեզ ոչինչ չի ասել և բոլորիս աչքի առաջ նա գործում է բացարձակապես ինքնուրույն և սկզբունքային հարցերը լուծում էր միայն ու միայն համաձայնեցնելով Մոսկվայի հետ: Թեկուզ մի օրինակ. հուրախություն մեզ, նրա միջամտությամբ Նիկոլայ Ռիժովը թույլատրեց վերականգնել թթի օդու արտադրությունը Ղարաբաղում, որն արգելված էր:

6.03.1989թ.: Հատուկ կոմիտեի գործունեության ընթացքում առաջին անգամ գործադուլի հայտարարվեց: Ես այդ ճիշտ չեմ համարում: Ընդհարումն էմ, թե ինչն է գործադուլի պատճառը, «ասում են»-ով են պատասխանում: «Ասում են՝ մետաքսը ներկելու համար չեն թողնում տանել Թբիլիսի», «Ասում են՝ Վոլսկին 15%-ի փոխարեն 20% է պահանջել, մերժում է ստացել», «Ասում են՝ «ՕՏԿԵՏ»-ը ուղարկում ենք Մոսկվա, իսկ Մոսկվան այն ուղարկում է Բաքու», «Ասում են՝ Մոսկվայում ամեն տեղ Բաքվի ներկայացուցիչ է նստած, և խանգարում են մեր հարցի լուծմանը» և այլն, և այլն:

Այսօր ընկ. Վոլսկին հրավիրեց բոլոր ձեռնարկությունների ղեկավարներին և մոտ 2,5 ժամ մեղադրական ճառ ասաց, բայց ներկաներից ոչ մեկը գլուխը չբարձրացրեց:

7.03.1989թ.: Հեռուստատեսությամբ հանդես եկան Բ. Դադանյանը, Ռ. Աթախանյանը և այլոք, որոնք կոչ արեցին բանվորներին գնալ աշխատանքի: «Սովետական Ղարաբաղ» թերթում ընթերցեցի Արկադի Վոլսկին հետ հարցազրույցը. սրտաբաց պատասխաններ են առաջարկված հարցերին: Պարզ երևում է, որ Վոլսկին Արցախը Հայաստանին վերամիավորելու խոսք չի տալիս, իսկ Ադրբեջանից անջատելը՝ խոստանում է: Լավ է:

9.03.1989թ.: Շարունակվում են գործադուլները:

11.03.1989թ.: Ստեփանակերտում են Իոսիֆ Կոբզոնը, Գեորգի Մովսիսյանը և Հմայակ Պետրոսյանը, որոնք թատրոնի

շենքում անվարձ համերգ տվին: Ի.Կոբզոնը ջերմ խոսքերով ելույթ ունեցավ և կոչ արեց առաջիկա ընտրություններում քվեարկել Միշին Վիկտոր Մաքսիմովիչի օգտին, որը Հատուկ կոմիտեի անդամ է, ՍՄԿԿ ԿԿ անդամ, ԳԽ դեպուտատ:

13.03.1989թ.: Որոշ մարդիկ գնացել էին, բայց համարվել են դավաճաններ: Էլեկտրատեխնիկական գործարանը լրիվ ծավալով վերսկսել է աշխատանքը: Բանն այն է, որ դեռևս 1988թ. սեպտեմբերից գործարանի տնօրեն Բորիս Առուշանյանի խնդրանքով Արկադի Վոլսկին, որ Ստեփանակերտում է 1988թ. ապրիլից, որպես ԽՍՀՄ ԿԿ ներկայացուցիչ՝ դիմել է ԽՍՀՄ էլեկտրատեխնիկական արդյունաբերության նախարարին և համոզել ու այս գործարանը հանձնել Երևանի «Լույս» արտադրական միավորման ենթակայությանը: Մի՞թե սա նվաճում է: Եվ ապագայում էլ մեր արդյունաբերական ձեռնարկությունները մեկը մյուսի հետևից հանել է Ադրբեջանի ենթակայությունից, որոնց մասին ընթերցողը կարող է ծանոթանալ «Հատուկ կառավարման կոմիտեի առաջին քայլեր» վերտառությամբ Ս.Բաբայանի հոդվածից («ԱԱ», 13.01.2018թ.):

14.03.1989թ.: Գործադուլը դադարեցվել է, բոլորն աշխատավայրերում են: Այդ օրը կոնդենսատորների գործարանում և թիվ 91 շինտրեստում կազմակերպվեց ընտրողների հանդիպում ԽՍՀՄ ԳԽ դեպուտատության թեկնածուներ Գ. Պողոսյանի, Բ. Առուշանյանի և Բ. Դադանյանի հետ: Երկու տեղում էլ ես հանդես եկա ելույթով և որպես Հ. Պողոսյանի վստահված անձ՝ կոչ արեցի քվեարկել նրա օգտին:

15.03.1989թ.: Այս անգամ հանդիպում էր կոչիկի ֆաբրիկայում, իսկ երեկոյան քաղլուստանը՝ բուժաշխատողների հետ: Երկու տեղում էլ առաջինը ես ելույթ ունեցա:

16.03.1989թ.: Հանդիպում էր քաղաքի ուսուցիչների և նախադպրոցական հիմնարկների աշխատողների հետ, որտեղ դարձյալ ես առաջինը ելույթ ունեցա՝ ըշելով, որ հեղափոխականների առաջին սերունդը պայքարել է շահագործող դասակարգի իշխանության վերացման և սոցիալիստական կարգեր հաստատելու համար, իսկ երկրորդ սերունդը, կոմունիստական գաղափարներով տարված, սխալ որոշումներ է ընդունել, այնպիսին, ինչպիսին 1921թ. հուլիսի 5-ի որոշումն է՝ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին տալը՝ կարծելով թե սոցիալիստական կարգ է, իշխելու է արդարությունը, և 70 տարվա ընթացքում մեզ չի հաջողվել 1921թ. սխալը ուղղել ու Մեյրի Հայաստանի ծոցը մնալ, ապա հեղափոխականների երրորդ սերունդը, ասել է թե՛ հեղափոխականների այսօրվա սերնդի ներկայացուցիչները, հանձնիս ընկ. Պողոսյանի, նրա և նրա համախոհների մեջ եմ տեսնում այն ուժը, որն ընդունակ է մեր Շարժումը հաղթական ավարտին հասցնել: Եվ ճիշտ է ասում ընկ. Պողոսյանը՝ «Ես համաձայն եմ միանալ 1940-50-ական թվականների Հայաստանին, իսկ այսօր երազում եմ երկու Հայաստան, երկու հայկական պետություններ ունենալ: Եվ ես համոզված եմ, որ մենք՝ կրթության աշխատողներս, մեծ սիրով մեր ծայրը կտանք ընկ. Պողոսյանի օգտին:

17.03.1989թ.: Հեռուստազրույց կազմակերպվեց ԽՍՀՄ ԳԽ դեպուտատության թեկնածուներ Հ. Պողոսյանի, Բ. Առուշանյանի և Բ. Դադանյանի հետ, որը մեծ հետաքրքրությամբ լսեցինք: Կարծես կյանքը նորմալ հունի մեջ է մտնում, մեծ հավատով սպասում ենք, որ մեր դեպուտատության թեկնածուները կընտրվեն և ԽՍՀՄ ԳԽ նստաշրջանի ամբիոնից մեր արդար պահանջի լուծման խնդիրը կառաջադրեն ու հետամուտ կլինեն նրա լուծմանը:

Մառն ԾԱՆԱԶԱՐՅԱՆ
Մշակույթի վաստակավոր
աշխատող,
20-րդ դարի Սյրեփ.
լավագույն մանկավարժ

ՀԱՎԵՐԺԻ ԿԱՄՓՈՐՂՆԵՐԸ

Արցախյան հողի վրա ամեն ոք և ամեն ինչ Շարժման ծնունդ է: Նույնիսկ ժամանակը ոչ միայն փիլիսոփայական հասկացություն է, այլև՝ շարժում: Այն, ինչպես Ղարաբաղյան շարժումը, միայն մեկ չափում ունի. անցյալից դեպի ապագա:

Ձորի Բալայան

Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ.8 միջնակարգ հոսքային դպրոցում օրերս կազմակերպվել էր «Ոչ ոք չի ծնվում մեռելու համար» խորագրով հուշ-ցերեկույթ՝ նվիրված կրթօջախի զոհված 14 սաների հիշատակին, որոնց համար տարին հորեյանական կլիներ, եթե տարիներ առաջ Ադրբեջանը մեր ժողովրդին չստիպեր հանդուրժել ու լռել «ծաղկած փշալարերից» այն կողմ հայտնվելու սպառնալիքով:



Բայց արդյո՞ք երկշտ է դարաբաղին: Այն տեսակը հայի, որի հոգու ծայրը երբեք ոչ ոք չի կարողացել լռեցնել: Այն կուտակվել էր, դարձել պայթյունավտանգ և հարմար պահի էր սպասում ժայթքելու... Եվ եկավ ժամը ալեկոծման: Արցախյան շարժումն առաջին հերթին պայքար էր մարդու իրավունքների, Աստուծո կողմից նրան տրված ազատ ապրելու իրավունքի վերահաստատման համար: Բավական էին մեզ մեծ պատերազմները, հասել էր մեծ խաղաղության ժամանակը: Արդար էր մեր գործը, իսկ ուղին՝ օրինյալ: Դժբախտ է այն երկիրը, որ հերոսներ չունի, իսկ մենք ազգերից անձանեքանիկ ենք երևի, քանզի ընդվզումի և մաքառման օրհասական պահերին բռունցք ենք դարձել՝ անարգանքի սյունին գամելով ոտիս նեց գնկտումները: Սակայն մեծ կսկիծով ենք արձանագրում, որ արցախյան պայքարի ժամանակ կորցրել ենք շատ կորույթի այրեր, որոնցից ամեն մեկը մի ընտանիքի հայր էր, միևնույն օրի ու եղբայր... և որոնք ի լուր աշխարհի հաստատեցին, որ մեր ուժի և հզորության Աստվածը՝ բոցամորուս ու հուրհեղ Վահագնը, առասպել չէ լոկ, որոնք մեր պատմությամբ վավերացրին «Քաջեր միշտ էլ կան, զենք է հարկավոր» թևավոր խոսքը դարձած հանրահայտ ճշմարտությունը: Եվ նրանց շնորհիվ է, որ այսօր Հայոց բանակն, ի հեռու կա ճակատագրի ու ոտիսների, զենքի ու քաջերի պակաս չի գգում: Դա քաջ գիտակցում է թշնամին և սիրտ չի անում մեր վերահսկողության տակ գտնվող տարածքները ոտք դնել: Եվ ինչ չի կարող անում նվաճել զենքով ու արյունով, ուզում է ձեռք բերել գրպայաչի գրչով ու լեզվով՝ չիմանալով, որ անիմաստ ջանք է թափում:

Մինչ միջոցառումն սկսվելը մասնակիցները ծաղիկներ խոնարհեցին դպրոցի զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող փառքի անկյունում: Ապա աշակերտները հանդես եկան հայրենասիրական բանաստեղծություններով, երգերով և ազգային պարերով: Ելույթ ունեցավ նաև պաշտպանության բանակի «Ասպետ» համույթը:


Միջոցառմանը ներկա էին զոհված ազատամարտիկների մայրեր, հարազատներ, ընկերներ, կրթության ոլորտի ներկայացուցիչներ: Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի վարիչ Կառլեն Մարգարյանը եզրափակեց միջոցառումը՝ ասելով, որ ինչքան կարի արցախցին, այնքան պարտական է հիշել իր մարտիրոսված քաջորդիներին: Իրավ, անցյալի հիշողությունը դիտակետ է ապագա տեսնելու, և, աչքի առաջ ունենալով այդ դիտակետը, մենք շարունակելու ենք հզորանալ ու սրբորեն պաշտպանել մեր ազատամարտիկների արյամբ գծված սահմանները:

Մենք դեռ տարածքներ ունենք ետ բերելու, դեռ վրեժ ունենք պատմությունից լուծելու: Կորցնելու իրավունք չունենք այլևս:

Մերի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱրՊՀ Լրագրության
բաժնի ուսանողուհի

ՆԵՐՈՍՆԵՐ

ՎԱՋԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ 60-ԱՄՅԱԿԻՆ



Յիրավի, սա է իսկական Սարգու մեծագույն արժանիքներից մեկը՝ իմանալ, հասկանալ ինքն իրեն. ի վերջո ո՞վ է ինքը: Այս մտորումները մեծ տեղ են գտել հայոց նորագույն պատմության Սպարապետի՝ Վազգեն Սարգսյանի կյանքում: Նա

դպրոցում՝ դպրոց-բանակ սերտ համագործակցության շրջանակում նշվեց Վազգեն Սարգսյանի ծննդյան 60-ամյա հոբելյանը:

Ներկա էին կրթության և սպորտի բաժնի վարիչ Կառլեն Մայիլյանը, դպրոցի տնօրեն Մարելլա Ավանեսյանը, ուսուցիչներ, աշակերտներ, զինվորականներ: Միջոցառումը կազմակերպվել էր դպրոցի միջին օղակի աշակերտների մասնակցությամբ, որոնք ներկայացրին Հայաստանի Հանրապետության ազգային և Արցախի հերոս, «Ոսկե արծիվ» շքանշանակիր Վազգեն Սարգսյանի կարծ, բայց իմաստալից, բազմախորհուրդ ու վառ ստեղծագործական վերելքով հերոսական կյանքը:

Վ. Սարգսյանը բացառիկ էր թե՛ մտածելակերպով, թե՛ գործելաոճով: Դեռ պատանեկության տարիներից նրա համար ուղենիշ էր Գարեգին Նժդեհը, և մշտապես մտավորական հերոսի կերպարն էր նրա

նը, նրա թափած արյան ու քրտինքի արգասիքը:

Ինչպես Սպարապետն էր ասում, բանակը, որն ինքնակրթությամբ ստեղծված բանակ է, ազգի ինքնաճանաչման հայելին է, բոլոր հայերի ծնունդը, հայության հավաքական կերպարը, նրա պատմության վերագնահատումը և հայացքը ապագային: Եվ նա չէր կարող սպասել, որ դրսից մարդիկ գային ու հայերին կռվել սովորեցնեին: Այսպիսով, սովորական արհեստավորի, բանվորի, արվեստագետի միջից ծնվեցին պաշտպանության նախարարներ, զենքավորներ, պարզապես զինվորներ, որոնց կամքի ուժով ու միաբանությամբ կռել ենք մեր մեծ հաղթանակը:

Դպրոցականների ու զինվորների հայրենասիրական երգերի ու բանաստեղծությունների գեղեցիկ կատարումներն ուղեկցվում էին սահիկավահանակներով՝ նվիրված իրական հերոսի կյանքին ու պայքարին:

Իհարկե, սահմանափակ ժամանակում դժվար է ամբողջությամբ ներկայացնել հերոսի ամբողջական կերպարը, սակայն միջոցառման կազմակերպիչներին հաջողվել է մատաղ սերնդի գիտակցությանը հասցնել մեր ժողովրդի վճռական լինելու, դժվարությունների առջև երբեք չձեռնկալու, հաստատակամություն դրսևորելու, ճակատագրական պահերին մատչվելու, միասնական կամք և ուժ դրսևորելու պատրաստակամությունը, ինչն էլ մեր հաղթանակների գրավականն է: Եվ դա էր Սպարապետի նպատակը՝ 21-րդ դար մտնել բոլոր իմաստներով հաղթանակած՝ միասնական և կուռ:

Ամփոփելով միջոցառման խորհուրդը՝ Կառլեն Մայիլյանը մեկ անգամ ևս արժևորեց Վազգեն Սարգսյանի ու նրա նման ազգանվեր հերոսների անձնվիրությունը հանուն հայ ժողովրդի:

- Ես հպարտ եմ, որ այդ ժողովրդի մի մասնիկն եմ, քանզի հաղթանակը կերտվել է յուրաքանչյուրիս մաքառման, նվիրվածության արդյունքում: Եվ այսօր բոլորս սրբազան պարտք ունենք Վազգեն Սարգսյանի զավակի՝ Հայոց բանակի հանդեպ: Քանզի բանակն է մեր սուրբ Հայրենիքի պահապանը:

Նա շնորհակալություն հայտնեց զինվորներին՝ հավաստիացնելով, որ ժողովուրդը նրանց թիկունքին է, և որ հայ ազգն անպարտելի է: Սա է, թերևս, Վազգեն Սարգսյանի երազած Հայաստանը:

Նման միջոցառումների ժամանակ աշակերտները տեսականորեն առնչվում են իրական հերոսին, նրա կյանքին ու կենսագրությանը և համոզվում, որ պետք է այնպես ապրել, որ կարողանան բաց ճակատով մայել նրա խստապահանջ և լուսավոր հայացքին:

Վազգեն Սարգսյանի ծննդյան 60-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումն ավարտվեց օրվան խորհրդանշական՝ «Երազ իմ երկիր...» երգով:

Անահիտ ԴԵՏՐՈՍՅԱՆ

Բանակ-դպրոց

ՀԱՅՐԵՆԻՔԸ ՍԿՍՎՈՒՄ Է ԱՌԱՋՆԱԳԾԻՑ

Հայրենիքը սկսվում է առաջնագծից, իսկ հայրենասիրությունը ձևավորվում է դպրոցում: Ռազմահայրենասիրական դաստիարակության համալիր ծրագրում ուրույն դեր ու նշանակություն ունեն այցելությունները գործառնաբեր: Մեր այցելությունները լինում են ոչ միայն մեր շեֆ-գործառնաբեր, այլ նաև՝ ուրիշ: Վաղուց էինք ուզում լինել Մատաղիսի գործառնաբեր: Եվ ահա դպրոցի տնօրեն Վ. Ղազարյանի, զինվորական Գ. Գրիգորյանի, ԱԱՄ 5-րդ համայնքի նախագահ Յ. Նասիբյանի և մի խումբ աշակերտների հետ եղանք Մատաղիսում: Նրանք երեքն էլ մասնակցել են Արցախյան ազատամարտին ու իրենց ուրույն դերն ունեն մեր հաղթանակի ձեռքբերման գործում:

Մեր առջև բացվեց մի հրաշալի տեսարան. հպարտ լեռների գոգի վեհ ու անսասան գյուղն է: Մի պահ թվաց, թե մոտենում ենք առողջարանային գոտու: Բայց գործառնաբեր մուտքի մոտ աչքի զարնեց թշնամու հրթիռների բեկորներից վնասված շենքի պատը:

Բակում մեզ դիմավորեցին: Ձորամասի հրամանատարն ու ԱՀՏԱԳ հրամանատարի տեղակալը ջերմ վերաբերմունք ցուցաբերեցին պլանավորված միջոցառումների հետագա իրականացման հարցում: Ըստ պլանի՝ տնօրենն ու զինվորական աշակերտների պատրաստած անուշահամ քաղցրավենիքներով նվերները պետք է հասցնեին առաջնագիծ և փոխանցեին մեր խաղաղ անդորրն ապահովող զինվորներին: Հուրախություն բոլորիս՝ առաջին գումարտակն էր առաջնագծում, որի շտաբի պետը մեր նախկին աշակերտ Գավրուշ Հարությունյանն է: Նրա և գործառնաբեր սպա-հոգեբանի ուղեկցությամբ շարժվեցինք դեպի դիրքեր: Իսկ ես աշակերտների հետ մնացի գործառնաբեր: Պետք է մի փոքրիկ էքսկուրսիա կատարեիք և ծանոթանալիք զինվորական առօրյային:

Մի քանի զինվորներ ծաղկանոցում խնամքի աշխատանքներ էին կատարում: Որքան սիրելի է հայ զինվորը, ինչպիսի՞ հոգատարություն է ցուցաբերում տնկիների համդեպ... Որքան մենք խաղաղասեր ու հոգատար ենք, նույնքան մենք ու չար է մեր թշնամին: Բակում ուսումնական գումարտակի նորակազմի զինվորներն են, պատրաստվում են պարասպանների: Հանկարծ նկատում եմ մի ծանոթ ժպտերես հայացք, միանգամից գրկում եմ ու համբույրներ դրոշմում իմ նախկին սանին՝ Սեյրան Հարությունյանին:

- Սիրելի տղաներ, այս համբույրները նաև ձերն են: Եղե՛ք առողջ: Համոզված եմ, որ պատվով կկատարեք ձեր պարտականությունները: Աստված ձեզ պահապան,- ասացի նորակազմիկներին:

Մտանք ուսումնական գումարտակ: Աշակերտները տեսան զինանոցները: Սպան աշակերտներին ծանոթացրեց այդտեղ առկա զինատեսակներին: Տեսնել էր պետը, թե նա ինչ է խորհուրդում ու հպարտորեն էր բացատրում աշակերտներին, իսկ վերջիններս ուշադիր ու լարված լսում էին:

Դուրս եկանք ու շարժվեցինք դեպի սպորտհրապարակ: Աշակերտներն սկսեցին վարժություններ կատարել: Փոքրիկ Տիգրանի ճարպիկ շարժումները տեսնելով՝ զինվորները մոտեցան, և նրանցից մեկը հարցրեց.

- Պարապո՞ւմ ես:
- Այո՛, ըմբշամարտ:
- Կուզե՞ս տեսնել մեր ֆիզպատրաստության սենյակը:

Պարզվեց, որ այն գտնվում է հետախուզական վաշտում: Աշակերտները կատարեցին ցուցադրական վարժություններ: Զինվորներն ուրախացան, հրճվանք ապրեցին, հավանաբար իրենց մանկությունը հիշեցին, իսկ ես մտորում էի. այստեղ խաչվում են անցյալն ու ներկան, որը գրավականն է մեր երազած ապագայի: Մի՞թե հպարտությունն չէ մանկավարժիս համար սպա-զինվոր-սպագա հայրենյաց պաշտպան շղթայում տեսնել քո ներդրումը, այն է՝ դաստիարակել հայրենասիրական վեհ գաղափարներով անհատներ: Շենքից դուրս գալով՝ ակամատես եղանք հետախուզների հերթափոխին: Որքան հետաքրքիր է այստեղ ամեն ինչ:

Ուրախությունս ու հպարտությունս բազմապատկեցին, երբ մեզ մոտեցավ հենց նոր առաջնագծից վերադարձած մեր դպրոցի նախկին սան, այսօր արդեն Մատաղիսի գործառնաբեր սպա Գագիկ Մանգասարյանը: Կարճ երկխոսությունից հետո նա մեզ ուղեկցեց զինվորական ճաշարան, և մենք ճաշակեցինք զինվորական ճաշատեսակներ:

Սպասում էինք առաջնագիծ գնացածներին: Ահա երևաց մեքենան, և մենք անհամբեր մոտեցանք՝ իմանալու, թե ինչ ապրումներով ու տրամադրությամբ են վերադարձել մեր երկրի անվտանգության երաշխավորների՝ անվախ ու քաջարի դիրքապահների մոտից: Արտաբուստ երևաց, որ տրամադրությունները բարձր են, նրանց աչքերը փայլում էին ուրախությունից:

Պարզվում է, որ զինծառայողների ձեռքի տակ եղած ՄՈՏ-ի մոնիթրինգի հնարավորությունները, ինչպես նաև անձնակազմի մարտական ոգին թույլատրում են բացի պետական սահմաններն անառիկ պահելուց հարկ եղած դեպքում դիմել հակահարձակողական գործողությունների: Իսկ դպրոցի տնօրենի՝ Վ. Ղազարյանի խոսումն աչքերում ասես կարդացի. «Իմ պատմական հայրենիքը դեռևս գերեզմարված է, հուսամ, որ կգա ազատագրման պահը...»:

Մարին ԽԱՀՍՏՐՅԱՆ

Ստեփ. հ. 5 հիմնական դպրոցի ՄՎԱԳՏՏ



ամենօրյա գործերում:

Մեծ ու անփոխարինելի էր մոր դերն ու ազդեցությունը Վազգենի հետագա կյանքում թե՛ որպես գրող, և թե՛ որպես հասարակական, փայլուն ռազմական գործիչ: Նա տիրապետում էր արվեստի տարբեր ճյուղերի, սիրում էր նվագել երաժշտական տարբեր գործիքներ, նաև հրաշալի նկարում էր: Գերազանց ֆուտբոլ էր խաղում, սակայն չընդունեց Մոսկվայի բարձրագույն լիգայի առաջատար թիմում հանդես գալու առաջարկը:

Դպրոցականներն ու զինվորականներն ակնհայտ ոգևորությամբ ու պարտքի բարձր զգացումով էին արտաբերում յուրաքանչյուր բառը: Նրանք հայ ազգի սպարապետի հասցեին՝ ոգեշնչվելով նրա ազգանվեր գործունեությամբ ու հայաստան գործելակերպով, հայրենասիրությամբ:

Վազգեն Սարգսյանն իր գիտակցական կյանքը նվիրեց իր ժողովրդին, հանուն նրա բարօրության ոչինչ չխնայեց: Նա չամուսնացավ, սակայն բոլորիս ի պահ տվեց ազգի հարատևության զավակին՝ Հայոց հզոր բանակը, որն օր օրի ավելի է զարգանում ու հզորանում: Եվ բանակաշինությունը եղավ նրա անձնաբերելի ստեղծագործություն-

Փայլուն տիրապետելով սեփական ազգի պատմությանը՝ Վազգեն Սարգսյանը գտնում էր, որ ամեն ժողովուրդ իր պատմության մեջ իր կռիվը գոնե մեկ անգամ մինչև վերջ պետք է տա: Եվ 80-ականների վերջերին եկել էր իր կռիվը տալու, սեփական ժողովրդի ճակատագիրը որոշելու վճռական պահը:

Երբ Արցախյան շարժումն ու Արցախի ալեկոծումն արդեն հասել էին զագաթնակետին, Վ. Սարգսյանը դարձավ Հայոց համազգային շարժման առաջնորդներից մեկը: 1990 թվականին ընտվեց Հայաստանի խորհրդարանի պատգամավոր: Մինչև 1991թ. դեկտեմբեր եղել է Գերագույն խորհրդի պաշտպանության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահը: Սեփական նախաձեռնությամբ հիմնադրել է «Երկրապահ» կամավորականների ջոկատները, որոնք փաստորեն հիմք են հանդիսացել Հայոց բանակի կազմավորման համար: Այն առաջին պաշտոնական հայկական զինվորական ստորաբաժանումն էր՝ 26 ջոկատից բաղկացած 2300 կազմով, որ գործում էր Մոսկվայից անկախ:

Մարտի 5-ին Ասկերանի էղմոն Բարսեղյանի անվան միջնակարգ

ԳԹԿ

ՈՒՂԵՅՈՒՅՑ
4-րդ դասարանի գիտելիքի ստուգում

1. ՄԱՅՐԵՆԻ
ԹԵՍԻՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ
ՈՒՍՏԱՆՈՒՄՆԵՐԻ ՊԵՏԱԿՆԵՐԸ

Թեստը պարունակում է 14 առաջադրանք, որոնցից 4-ը ենթաառաջադրանքներով են: Յուրաքանչյուր առաջադրանքի և ենթաառաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1-ական միավորով:

Թեստը բաղկացած է 2 մասից:

1-ին մասը պարունակում է որևէ տեքստ՝ գեղարվեստական կամ գիտահանրամատչելի: Տեքստերի ծավալները կախված են դրանց տեսակից. գեղարվեստական բովանդակությամբ տեքստերը պարունակում են շուրջ 350 բառ, գիտահանրամատչելիներն ավելի պակաս՝ շուրջ 280 բառ:

1-ին մասի առաջադրանքներից 5-ը վերաբերում են տեքստի բովանդակությանը (դրանցից 2-ը 2-ական ենթաառաջադրանքներով են. ընդհանուր հաշվով 7 հարց՝ տեքստի բովանդակության վերաբերյալ): Այդ հարցերով ստուգվում են ընթերցանության զանազան ունակություններ՝ ուշադրություն, հետևություններ ու եզրակացություններ անելու կարողություն, տեքստը վերլուծելու, գնահատելու և արժևորելու հմտություններ:

6-րդ առաջադրանքը վերաբերում է տեքստում բայերի ճիշտ ժամանակաձևով գործածությանը, 7-րդ առաջադրանքը նախադասության տեսակներին ըստ կազմության՝ պարզ, բարդ, համառոտ, ընդարձակ կամ ըստ երանգի՝ պատմողական, հարցական, հրամայական, բացականչական:

2-րդ մասը պարունակում է տեքստից անկախ՝ 7 առաջադրանք, որոնցով ստուգվում են՝

1. ուղղագրական դժվարություն ունեցող բառում բաց թողած տառի տեղադրում,
2. բառի իմաստի իմացություն, հոմանիշների և հակահիշների ճանաչում, բառի փոխաբերական իմաստով գործածություն, դարձվածքների ճանաչում,
3. բառի կազմության ճանաչում՝ պարզ, բարդ (հոդակապով, անհոդակապ), ածանցավոր (նախածանցավոր, վերջածանցավոր),
4. գոյականի, դրա թվի և տեսակների՝ հատուկ, հասարակ, ածականի, թվականի, շաղկապի ճանաչում,
5. նախադասության անդամների ճանաչում՝ ենթակա, ստորոգյալ, կոչական, լրացումներին տրվող հարցերի իմացություն,
6. նախադասության մեջ բաց թողած կետադրական նշանի (բարդ նախադասության բաղադրիչների կամ բազմակի անդամների դեպքում) կամ նշանների (կոչականի դեպքում) ճիշտ տեղում նշանակում,
7. բառերի ձևափոխություն և տեղադրում տրված նախադասության բաց թողած տեղերում:²

Թեստի առավելագույն միավորն է 20-ը: Թեստի կատարմանը հատկացվում է 60 րոպե:

Գնահատման սանդղակ			
Միավորը	Գնահատականը	Միավորը	Գնահատականը
1	1	11-13	6
2-3	2	14-15	7
4-5	3	16-17	8
6-7	4	18-19	9
8-10	5	20	10

¹ Որոշ դեպքերում 2-րդ մասի առաջադրանքներն ըստ նպատակահարմարության կարող են առնչվել տեքստին:

² Յուրաքանչյուր ճիշտ ձևավորված բառի համար տրվում է մեկական միավոր:

ԹԵՍԻՒ ՆՈՒՇ
1-ին մաս

Կարդա՝ տեքստը և պատասխանիր տրված հարցերին:
Դավիթը կյանքը գրեթե հրաշալի էր. նա իրենց բակում շատ ընկերներ ուներ, որոնց հետ ամեն օր՝ դասերից հետո, գնում էր գնդակ խաղալու: Միայն թե Դավիթը մի մեծ խնդիր ուներ. դա նրա փոքր քույրն էր՝ Լիլին: Լիլին ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, որ Դավիթին ու նրա ընկերներին բուլլոկին դուր չի գալիս, որ ինքը միշտ նրանց հետ է լինում: Չենց տղաները դուրս էին գալիս բակ, Լիլին իր փոքրիկ ոտիկներով (*վազել*) նրանց մոտ և ուրախ-ուրախ ցատկոտելով՝ հայտնում.
- Ես եկա՛...
Դավիթը փորձում էր մորը համոզել, որ Լիլին չթողնի իրենց հետևից գալ: Դավիթը ծիծաղում էր. Գալիս էր Լիլին, Գալիս էր Լիլին, Գալիս էր Լիլին, Գալիս էր Լիլին... Լիլին չէր հասկանում, որ Դավիթը ընդհանուր քույր չէր չլինում... Քո բախտն այդ հարցում չի բերել:
Մի օր Դավիթը ուզում էր տղաների հետ գնդակ խաղալ: Սկզբում նրանք մի ծանր գնդակ ունեին: Բայց մի անգամ այդ գնդակը Սարգիս քեռու պատուհանը կտորեց: Ի՞նչ պատմության մեջ ընկան:
Գնդակն էլ այլևս հետ (*չստանալ*): Չիմա արդեն թեթև գնդակով էին խաղում: Այդ օրը տղաները դեռ մոր էին դուրս եկել, երբ Լիլին սովորականի պես վազեց նրանց մոտ ու ասաց.
- Ես եկա՛...
Տղաները, ինչպես միշտ, ձևացրին, թե նրան չեն նկատում: Նրանք սկսեցին խաղալ: Տղաներից մեկը այնպես ուժգին հարվածեց գնդակին, որ այն այս անգամ էլ (*ընկնել*) Սարգիս քեռու բակը: Նրանք վազելով մոտեցան ցանկապատին և տեսան գնդակը խոտերի մեջ՝ այնքան հեռու, որ ձեռք չէր հասնի: Չակոբը փորձեց անցնել ցանկապատի ճաղերի արանքով, բայց չկարողացավ:
- Ես չեմ կարող անցնել, - հուսահատ ասաց նա, - ցանկապատը շատ խիտ է: Եվ մեզանից ոչ մեկը չի կարող:
Իրավիճակն անելանելի էր: Բոլորից շատ Դավիթն էր տխրել:
- Այս ամենը Լիլին պատճառով եղավ, - ասաց նա, - Տիգրանը այդքան ուժեղ խփեց գնդակին, որովհետև Լիլին վրա էր բարկացել:
- Մի նայեք Լիլին, տեսեք, թե նա ինչ -փոքրիկ է, - ասաց Արմենը, - Լիլի՛, այստեղ արի:
Լիլին վազելով եկավ՝ ասելով.
- Ես եկա՛...
Չեչտությանը մոտենալով ճաղերի արանքից՝ Լիլին դուրս բերեց գնդակը ու համոզեց իրացած տղաներին: Դավիթը հպարտությամբ նայում էր նրան, հետո ասաց.
- Ես թեզ գնդակ խաղալ (*սովորեցնել*):

1) Նշիր երկու բան, որոնցով նկարագրվում է Լիլին:

Պատասխան՝ _____, _____

2) Ո՞րն էր Դավիթի հիմնական խնդիրը:

- 1) Չարևանը գնդակը հետ չէր տալիս:
- 2) Քույրն ամեն տեղ ուզում էր նրա հետ գնալ:
- 3) Ընկերները կորցրել էր Դավիթի միակ գնդակը:
- 4) Մայրը բարկանում էր, երբ ինքը քրոջ հետ կոպիտ էր վարվում:

3) Ուշադիր կարդա տեքստի երկխոսությունները և պատասխանիր տրված հարցերին:

- ա.** Ի՞նչ է պատասխանում մայրը տղայի հարցին:
- 1) Նրա ընկերներից ոչ մեկը քույր չուներ:
 - 2) Ընկերների մայրերը աղջիկներին թույլ չեն տալիս բակ դուրս գալ:
 - 3) Նրանցից մեկը քույր չուներ, իսկ մյուսինը դեռ շատ փոքրիկ է:
 - 4) Լիլին իրենց բուլլոկովին չի խանգարում, չի նվճարում և խաղերին չի խառնվում:

բ. Ըստ Դավիթի՝ ինչո՞վ էր մեղավոր Լիլին, որ գնդակը հարևանի բակն ընկավ:

Պատասխան՝ _____

4) Ինչո՞ւ տղաները չէին կարող հարևանին խնդրել, որ գնդակը վերադարձնի:

Պատասխան՝ _____

5) **ա.** Ինչո՞վ օգնեց փոքրիկ աղջիկը տղաներին:

Պատասխան՝ _____

բ. Ինչի՞ց ենք մենք իմանում, որ եղբոր վերաբերմունքը նրա հանդեպ փոխվեց:

Պատասխան՝ _____

6) Փակագծերում դրված բայերը տարբերակներում ներկայացված են որոշակի դեմքով, թվով և ժամանակով: Ըստ տեքստի՝ ո՞ր տարբերակի բայի ձևն է սխալ:

- 1) **վազել** - վազում էր
- 2) **չստանալ** - չենք ստացել
- 3) **ընկնել** - ընկավ
- 4) **սովորեցնել** - կսովորեցնեն

7) Տեքստից դուրս գրիր 1 հարցական նախադասություն:

Պատասխան՝ _____

2-րդ մաս

Կատարիր տրված առաջադրանքները:

8) Տրված բառակապակցությունների ընդգծված բառերում բաց թողնված տառի կամ տառակապակցության տեղում դատարկ վանդակ է: Արտագրիր ընդգծված բառերը՝ դատարկ վանդակի փոխարեն լրացնելով բաց թողած տառը կամ տառակապակցությունը:

տաք հա ուստ, հմուտ ոսորդ,
լայն մի անցք, երկարավիզ ընծու տ
Պատասխան՝ _____, _____,
_____, _____

9) Ո՞րն է տրված նախադասության ենթական:

Վերադարձին մի անտառի մեջ թագավորը հանդիպեց մի ծերունու:

Պատասխան՝ _____

10) Տրված նախադասության մեջ բաց է թողնված մեկ կետադրական նշան: Արտագրիր այդ նախադասությունը և դիր բաց թողնված կետադրական նշանը:

Այդ երկրում բարձր ծառերով մի անտառ կար որը հասնում էր մինչև կապուտակ ծովի ափը:

Պատասխան՝ _____

11) Ո՞ր բառի իմաստն է՝ **փորելով գետնի տակից որևէ հիմ բան հանել:**

- 1) պեղել
- 2) զննել
- 3) նշմարել
- 4) կերտել

12) Տրված բառերից որի՞ ղիմաց է սխալ նշված նրա տեսակը՝ ըստ կազմության:

- 1) **աշխարհամաս** - հոդակապով բարդ բառ
- 2) **գարմանալի** - վերջածանցավոր բառ
- 3) **ջրհոր** - անհոդակապ բառ
- 4) **մատիտ** - ածանցավոր բառ

13) Տրված բառերից յուրաքանչյուրի ղիմաց նշված է, թե այն ինչ խոսքի մաս է: Ո՞ր տարբերակում է սխալ նշված:

- 1) **դպրոց** - իր ցույց տվող գոյական
- 2) **այգի** - ածական
- 3) **թեև** - շաղկապ
- 4) **երեսուն** - թվական

14) Արտագրիր նախադասությունը՝ փակագծերում տրված բառերը ձևափոխելով և տեղադրելով բաց թողած տեղերում:

Նա տեսավ, որ դուրս գալիս հայրը մի հանդիպեց:

(խանութ, ծանոթ)

Պատասխան՝ _____

ԳԹԿ

2. ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՌԱՋԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Թեստը բաղկացած է 17 առաջադրանքներից, որոնք երեք տեսակի են՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ, կարճ պատասխանով առաջադրանքներ և ընդարձակ պատասխանով առաջադրանքներ:

Ընտրովի պատասխան են պահանջում 1-10-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Կարճ պատասխան են պահանջում թեստի 11-15-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Ընդարձակ պատասխան են պահանջում 16-րդ և 17-րդ առաջադրանքները, որոնք խնդիրներ են: Այդ խնդիրները լուծելիս աշակերտը պետք է ներկայացնի խնդրի լուծման ամբողջ ընթացքը: 17-րդ խնդիրը լուծելիս համառոտագրելը պարտադիր է: Եթե 16-րդ խնդրի համար տրվում է առավելագույնը 2 միավոր (յուրաքանչյուր ճիշտ քայլի համար՝ 1 միավոր), ապա 17-րդ առաջադրանքի համար՝ 3: Ամփոփիչ վերջնական միավորն ստացվում է թեստի առաջադրանքների պատասխաններից աշակերտի վաստակած բոլոր միավորների գումարից (առավելագույնը՝ 20 միավոր), որը համապատասխանեցվում է 10 միավորանոց համակարգին:

Table with 4 columns: Միավորը, Գնահատականը, Միավորը, Գնահատականը. Rows: 1, 2-3, 4-5, 6-7, 8-10

ԹԵՍՏԻ ՆԱՌԻՇ

Շրջանի մեջ վերցրու 1 - 10-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանները:

1 Գտիր այն թիվը, որի գրությունը համապատասխանում է չորս հազար երեք հարյուր յոթ թվին:

- 1) 4037
2) 4307
3) 4703
4) 4073

2 Ընտրիր այն թիվը, որը 360-ից փոքր է 12-ով:

- 1) 4320
2) 372
3) 348
4) 30

3 Քանի՞ տասնյակ կա 768 թվի մեջ:

- 1) 6
2) 76
3) 7
4) 68

4 Ընտրիր այն թվանշանը, որը աստղանիշի փոխարեն տեղադրման դեպքում ստացված թվերը դասավորված կլինեն նվազման կարգով. 8*6, 856, *75

- 1) 4
2) 5
3) 7
4) 9

5 Ընտրիր այն թվանշանը, որը տեղադրելով աստղանիշի փոխարեն՝ կստանաս անհավասարություն. 4 կգ 61 գ < 4 կգ * 1գ

- 1) 4
2) 5
3) 6
4) 7


6 Ընտրիր այն պատասխանը, որն արտահայտում է 2 օր 15 ժամը ժամերով:

- 1) 215 ժ
2) 39 ժ
3) 63 ժ
4) 135 ժ

7 Քառակուսու պարագիծը 132 սմ է: Գտիր քառակուսու կողմի երկարությունը:

- 1) 33 սմ
2) 66 սմ
3) 264 սմ
4) 528 սմ

8 Նշիր այն գծապատկերը, որի 3/7 մասը ներկված է:



9 Ո՞ր դատողությունն է ճիշտ.


- 1) Նվազելին կստանաս, եթե հանելից հանես տարբերությունը:
2) Գումարելիներից մեկը մեծացնելիս, իսկ մյուսը փոքրացնելիս միևնույն միավորով գումարը չի փոխվում:
3) 0-ից տարբեր երկու հավասար թվերի քանորդը հավասար է 0-ի:
4) Թիվը 10-ով բազմապատկելիս բավական է այդ թվի գրության վերջից երկու 0 ավելացնել:

10 Կտրեցին 12 մ երկարությամբ մետաղալարի 1/4 մասը: Քանի՞ մետր մետաղալար մնաց:
1) 3 մ

- 2) 6 մ
3) 9 մ
4) 48 մ

11 11 - 15-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը գրիր յուրաքանչյուր առաջադրանքից հետո նշված տեղում:

Տրամագրի միջոցով տրված է օրվա տարբեր ժամերին օդի ջերմաստիճանը: Օգտվելով տրամագրում բերված տվյալներից՝ հաշվիր օրվա ընթացքում գրանցված ամենաբարձր և ամենացածր ջերմաստիճանների տարբերությունը:



Պատ.՝ _____

12 Հաշվիր ամենամեծ զույգ քառանիշ և ամենափոքր կենտ եռանիշ թվերի տարբերությունը:

Պատ.՝ _____

13 Դիր թվաբանական գործողության նշանները (+, -, •, :) այնպես, որ վերականգնվի հավասարությունը:

94 □ 54 □ 6 = 85

14 Հաշվիր 6532 - 5 • (1253 : 7 + 536) արտահայտության արժեքը:

Պատ.՝ _____

15 Կռահիր օրինաչափությունը և տրված թվերից հետո ավելացրու ևս մեկ թիվ: 324, 524, 924, 1524, ... :

Պատ.՝ _____

16-17-րդ առաջադրանքներից հետո նշված տեղում մանրամասն ու հիմնավորված ներկայացրու առաջադրանքների լուծման ամբողջ ընթացքը:

16 Ուղղանկյունաձև սավանի երկարությունը 220 սմ է, որը 60 սմ-ով մեծ է լայնությունից: Հաշվիր այդ սավանի մակերեսը:

Պատ.՝ _____

17 Երկու վայրերից, որոնց միջև եղած հեռավորությունը 564 կմ է, միաժամանակ իրար ընդառաջ շարժվեցին երկու ավտոմեքենա, նրանցից մեկի արագությունը 63 կմ/ժ էր: Ի՞նչ արագությամբ էր շարժվում երկրորդ ավտոմեքենան, եթե ավտոմեքենաները հանդիպեցին շարժվելուց 4 ժամ հետո:

Պատ.՝ _____

ՈՒՍՈՒՄՆԱԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ԱՆԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ 6 ԴԱՍԱՐԱՆ

Դասապրոցները հետաքրքիր դարձնելու և նպատակային անցկացնելու նպատակով առաջադրվում են խաղային տեխնոլոգիայի մոդուլները: Ուսուցիչները հաճախ ասում են, որ խաղն իրապես ակտիվացնում է երեխաներին, բայց իրենք խաղալու ժամանակ չունեն դասարանում: Նման մոտեցումը, մեղմ ասած, անընդունելի է:

Ոչ ոք չի առաջարկում մոռանալ ուսումնական աշխատանքը և սկսել աննպատակ խաղալ երեխաների հետ: Խաղի միջոցով կարելի է լուծել ուսումնական բոլոր խնդիրները հատկապես կրտսեր դպրոցում, հարկավոր է խաղը տարրալուծել ուսումնական գործընթացի մեջ: Խաղի ընթացքում երեխան կարող

նախնայել և ազատ մտածել տվյալ հարցի շուրջ:

Խաղի մոդուլ.

Ամփոփիչ դաս. «Աֆրիկա, Ավստրալիա, Անտարկտիդա մայրցամաքներ»-ի ամփոփում:

1-ին փուլ. Խաղի նախապատրաստումը սկսել մեկ շաբաթ առաջ: Դասարանում կազմակերպել ինքնուրույն աշխատանք, հաղորդել խաղի թեման, անցկացնել պլանն ու խաղի պայմանները:

Հետաքրքրության խթանման ու աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով ավելի շատ կիրառել հետաքրքրաշարժ նյութեր, վառ, պատկերավոր նկարներ:

2-րդ փուլ. Խաղի անցկացումը: Դասարանը բաժանվում է 3 խմբի,

քանի որ ուսումնասիրվում է 3 մայրցամաք:

Ամեն խմբի համար կտրվի գույն (կանաչ, դեղին, կարմիր): Որից հետո խմբերից մեկական հոգի կմոտենա ծառին և կվերցնի իր խմբին համապատասխանող գույնի խնձորը ու շրջելով՝ կփակցնի գրատախտակին (խնձորների հետևում տառեր են գրված, և երեխաները, նույն գույնի խնձորները կողք կողքի դնելով, պետք է գուշակեն, թե որ մայրցամաքն են ներկայացնելու):

Աշակերտներից յուրաքանչյուրը վերցնելով մեկ տառ և փակցնելով՝ պետք է քարտեզի վրա ցույց տա այդ տառով սկսվող ցանկացած աշխարհագրական օբյեկտ.

Օրինակ՝ Ա-Ամազոն, Ֆ-Ֆինլանդիա, Ի-Իսլանդիա S-Տիգրիս և այլն:

Որից հետո խմբերն սկսում են ներկայացնել իրենց մայրցամաքի հայտնագործման ու հետազոտման պատմությունը և հետաքրքրության համար, եթե կարողանան, ներկայացնել բեմականացման ձևով:

3-րդ փուլ. Ավագների փուլ: Առանձին իրար հետ պետք է մրցեն խմբի ավագները: Հարցադրումը կատարում է ուսուցիչը: Որից հետո խմբի ավագներն իրար տալիս են մեկական հարց:

4-րդ փուլ. Ուսուցիչը ներկայացնում է նկարներ սլայդի ձևով, իսկ աշակերտները պետք է կարողանան պատասխանել, թե այդ վայրը որ մայրցամաքում է գտնվում, կամ որ ջրվեժի, իրաբխի, գետի, թեկուզ նաև ճանապարհորդի նկարներն են:

Երեխաներին գնահատելու և խրախուսելու համար կարելի է հրավիրել դպրոցի ուսուցիչների ու կազմակերպչին, որը կհեշտացնի դասավանդող ուսուցչի աշխատանքը: Խաղային այս տեխնոլոգիան կարելի է կիրառել 8-րդ դասարանում պետություններ ընտրելով, իսկ 9-րդ դասարանում՝ Հայաստանի մարզերն ընտրելով:

Բարի և բեղմնավոր աշխատանք մեր քաղաքի աշխարհագրության ուսուցիչներին:

L. ԱՐԶԱՎՈՒՆՅԱՆ
Քաղաքային մ/մ նախագահ

ՆՈՐԱԿԻՏՈՒԹՅԱՆ

ԱՐՑԱԽՅԱՆ ՓՈՐՁԱՌՈՒ ԱՆԱՍՆԱԲՈՒՅԹ ԳԻՏՆԱԿԱՆԸ



Արտախյան Արշակունի Արտախյանի ֆոտոպորտրետը

Սեյրան Շահնագյանը 1939թ. մեծացել մանկական բարեհոգ պայմաններում՝ պատմական Ավետարանոց (Չանաղջի) գյուղում, մտավորականի ընտանիքում (ծնողներն ուսուցիչներ էին)։ Մանուկ ու երիտասարդ հասակում ուսում առնելիս արցախյան ոգեշունչ տղա էր բոլոր տեսակի ընկերական խաղերում՝ պահնոցի (կյուլըլկանի), ջջլախտի։ Այս խաղերով տղաները մարզվում էին թշնամուց հայրենիքը պաշտպանելու գաղափարին։

Սեյրան Շահնագյանի հայրը՝ Ալեքսանդր Շահնագյանը, մաթեմատիկայի բազմափորձ ուսուցիչ էր։ Երկար ժամանակ եղել է դպրոցի տնօրեն և միշտ ուշադիր էր երեխաների բարեկիրք պահվածքի, գիտության մեջ խորանալու առանձնահատկությունների նկատմամբ (ցավոք, անհմաստ վերաբերմունքից երեխան տուժել է դպրոցը ոսկե մեդալով ավարտելու հնարավորությունից)։ Հայրը ֆաշիզմի դեմ մղված պայքարին մասնակցած բազմափորձ մտավորական էր ու լրջմիտ գործիչ, անհմաստ փոքրգոյություններին ուշադրություն չէր դարձրել։

Երիտասարդ Ս. Շահնագյանը բարձրագույն կրթությունը ստացել է Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտում՝ 1961թ. բարձր առաջինությանը ստանալով գիտնական-անասնաբուծի որակավորում (որպես ուսանող արժանացել է մի շարք պատվոգրերի՝ լավ սովորելու և հասարակական աշխատանքներին գործուն մասնակցություն ցուցաբերելու համար)։ Նրան երաշխավորել էին գիտական բնագավառում Երևանում ուսումը և աշխատանքը շարունակելու, բայց ընտանիքը կանչել է հայրենիք։ Իսկույն աշխատանքի են նշանակել Ստեփանակերտի կոմպլեքսային զոնալ փորձակայանի անասնաբուծության բաժնում՝ որպես ավագ գիտական աշխատող։ Այդտեղ երկար տարիներ աշխատող այդպիսի մասնագետները, գիտական առաջընթացը չունենալով, կրճատվել էին։ Գեոտեսուս ու գիտության ծարավ Ս. Շահնագյանը 1968-1971թթ. իր մասնագիտական ուսումը շարունակել է Մոսկվայի մարզի Դուբոնովիցի ավանի համաձիթենական անասնաբուծական գիտահետազոտական ինստիտուտի առկա ուսուցման ասպիրանտուրայում և ավարտելուց հետո նորից աշխատանքի անցել Ստեփանակերտում։ 1972թ. այն նույն համաձիթենական անասնաբուծական գիտահետազոտական ինստիտուտում «Կերակրման տարբեր մակարդակների ազդեցությունը սևաբղետ ցեղի հորթերի հետագա կաթնային մթերատվության և նյութափոխանակության վրա» թեմայով պաշտպանել է ատենախոսություն և ստացել գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։ 1988-1992թթ. աշխատել է որպես հայրենի գյուղի կոլեկտիվ տն-

տեսության ղեկավար։ Այն դժվարալյաց տարիներին տափաստանային տեղանքներում հողի մշակման, բարիքների հավաքման դժվարամատույց հարցեր շատ են եղել ազգերի անասնապահների հետ, որ անբռնազրուս լկտիությանը կենդանիների կերակրման տեղանաս էին դարձրել Ավետարանոցի և շատ հայկական տափաստանային հացահատիկային մշակման հողամասերը (կանաչ ցորենի հայկական արտերն անասուններով լցնում էին)։ Ընդհանրապես, Գոյապայքարի սկզբնական շրջանում հայկական շատ մշակովի հանդամասեր լկտիաբար արտատեղի էին դարձնում։ Առաջացել էին հացահատիկի ապահովման դժվարություններ։ Կոլտնտեսության նախագահ Ս. Շահնագյանի երեսին անպատկառ պահվածքով նետում էին՝ գնացք ձեր երկիրը։ Գնառային տնտեսությունների լուծարումը յուրատիպ կացութաձև էր ստեղծել, ու գիտության գործիչ Ս. Շահնագյանը վերադարձել է գիտակրթական բնագավառ։ 2009-2010 թվականներին ԱրՊՀ-ում ստացել է դոցենտի գիտական կոչում։ Երբ 2015թ. ագրարային համալսարանը տեղափոխեցին Շուշի (այնուհետև՝ տեխնոլոգիական համալսարան), Ս. Շահնագյանը նույնպես աշխատել է այնտեղ ու առայսօր անձնավորաբար աշխատում է որպես անասնաբուծական և անասնաբուծական ամբիոնի վարիչ։ Նա ունի աշխատություններ՝ «Գյուղատնտեսական կենդանիների կերակրման պրակտիկում» (Ստ., 2012թ., 85 էջ), «Կովկասյան գորշ ցեղի տնտեսական կենդանաբանական հատկությունները և կատարելագործման ուղիները ԼՂՀ-ում» (Ե., 2012թ., 100 էջ)։ Ս. Շահնագյանը հեղինակ է բազմաթիվ հոդվածների՝ «Կերակրման տարբեր մակարդակի ազդեցությունը սևաբղետ ցեղի հորթերի հետագա կաթնային մթերատվության և նյութափոխանակության վրա» (ռուսերեն, «Անասնաբուծություն», Մոսկվա, թիվ 9, 1970թ.), «Ավստրիական ծագման շվից ցեղի երիմջների աճը, զարգացումը և կաթնային մթերատվության ձևավորումը ԼՂՀ պայմաններում» («Ագրոգիտություն», Ե., թիվ 1-2, 2013թ.), «ԼՂՀ անասնաբուծական մթերքներով պարենային ապահովմանության ներկայի վիճակը և զարգացման հեռանկարները» («Գիտությունը և կրթությունը Արցախում», Ե., թիվ 3-4, 2016թ.) և այլն։ Գտնական-մանկավարժ Սեյրան Շահնագյանն արժանացել է մի շարք պատվոգրերի (ԼՂՀ կառավարության, գյուղնախարարության, ԱրՊՀ, ՀՀ ԱԶ Ստեփանակերտի մասնաճյուղի կողմից) և «Աշխատանքի արիություն», «ԱրՊՀ-40», ԼՂՀ վարչապետի, ԼՂՀ գյուղատնտեսության ոսկե մեդալներով։

Ս. Շահնագյանն այն աշխատասեր ու նվիրյալ գիտնականներից է, որ անասնաբուծության բնագավառի համաշխարհային նորություններն անխնայ մատուցում է ուսանողներին և երիտասարդ մասնագետներին՝ լույս ու ջերմություն սփռելով գյուղատնտեսության կրթական բնագավառում։

Գործընկերները միշտ գոհ ու բարեօպիտ են վերաբերվում գիտության անխնայ մշակին, ղեկավարության կողմից միշտ գնահատվել է նրա անդուլ աշխատանքը։

Պավել ՍԱՐՑԱՆ Գործընկեր

ՎԱՍՏԱԿԱՆԱՏ ՄՏԱՎՈՐԱԿԱՆԸ՝ ՕԺՏՎԱԾ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԽՈՐԱԿԻՏՈՒԹՅԱՄԲ



Քչերն ունեն մասնագիտական այնպիսի ունակություններ, ինչպիսիք ունի Շուշիի Ս. Արքայանի անվան միջնակարգ հոսքային դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Մերուժան Սարգսյանը։ Նա օժտված է

մաթեմատիկական խորապես ընկալելու առանձնահատկությամբ։ Բնականից լինելով խոհուն անձնավորություն՝ Ս. Սարգսյանն իր ժամանակի մեծ մասը տրամադրում է մաթեմատիկական ամենադժվար խնդիրների ուսումնասիրմանը, դրանց լուծման արդյունավետ մեթոդների մշակմանը։

Շուշիում նրան անվանում են մեծագույն մաթեմատիկոս. ավելին՝ ինքն ու այդ կարևորագույն առարկան գտել են իրար։ Նրա համար մաթեմատիկայով զբաղվելը մեծ բավարարություն է, բնատուր շնորհ։ Քանի՞-քանի սերունդներ են նրա շնորհիվ խորացրել իրենց մաթեմատիկական ունակությունները։

Մերուժան Սարգսյանը ծնվել է 1959թ. փետրվարի 20-ին Մարտունու շրջանի Սոս գյուղում։ Միջնակարգ կրթությունը տեղում ստանալուց հետո 1976թ. ընդունվել է 1981-ին ավարտել է Երևանի պետական լսարանի մեխմաթ ֆակուլտետը։

Որպես ծրագրավորող ինժեներ (ճարտարագետ) աշխատել է Երևանի «ԱԳԱՏ» հաշվիչ մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում մինչև 1990 թվականը։

Արցախյան շարժումը տուն է կանչել հարազատ զավակներին։ Որպես իր հող ու ջրին կապված հայրենասեր մարդ՝ Ս. Սարգսյանը վերադարձել է հայրենական օջախ և աշխատանքը շարունակել Մարտունի քաղաքում բացված Երևանի Մերգելյան ինստիտուտի տեղի մասնաճյուղում՝ որպես ծրագրավորող ինժեներ։

Արդեն շիկացել էին ժամանակները, և աշխատանքին զուգընթաց Սոս գյուղում ձեռնարկում էին ինքնապաշտպանական գործողություններ ու եղաններով, կացիներով, ինքնաշեն զենքերով պաշտպանում Ամարասի տարածքը։ Եվ այսպես՝ ամեն օր. աշխատանքի էր գնում Մարտունի, վերադառնում հայրենի գյուղ ու մասնակցում պաշտպանական գործողություններին։ Այդպես մինչև մարտական գործողությունների սկսվելը, որից հետո մասնակցում է մի շարք ռազմագործողությունների՝ նվիրվելով հայրենիքի փրկության վեհ գործին։

Հայրենիքին մատուցած անձնվեր ծառայության համար Մերուժան Սարգսյանն արժանացել է մի շարք պարգևների՝ «Մարտական ծառայություն», «Անդրանիկ Օզանյան», «Մայրական երախտագիտություն» մեդալներ, «Երկրպագի» կամավորականների միության պատվոգրի։

1993թ. Ս. Սարգսյանն ընտանիքով տեղափոխվում է ազատագրված Շուշի, որտեղ ստեղծում է իր ընտանեկան հարկը։ Առժամանակ դեռ շարունակում է գիմնորական ծառայությունը։ 1995թ. սեպտեմբերին Շուշիի կրթության բաժնի պահանջով նա անցել է մանկավարժական գործունեության, որտեղ և դրսևորվել են նրա մասնագիտական կարողություններն ու մարդկային բարձր որակները։ Սկզբում աշխատանքի է անցել «Արամ Մանուկեան դպրոց-վարժարանում»՝ որպես մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ուսուցիչ։ Այնուհետև դպրոցն անվանակոչվել է Մուրադյանի անվան միջնակարգ, և շարունակել է աշխատել այդտեղ, որն այդուհետ դարձել էր շրջանի ավագ դպրոց։

1996-1998թթ. համատեղության կարգով

աշխատել է Շուշիի կրթության և սպորտի բաժնում՝ որպես մեթոդկաթիմի վարիչ։

2016-2017 ուստարում Շուշիի հանրակրթական դպրոցները միավորվել են, և արդեն երեք տարի է, ինչ Ս. Սարգսյանն աշխատում է Ս. Արքայանի անվան միջնակարգ հոսքային դպրոցում։ Բոլորը հիացմունքով են խոսում նրա մասնագիտական պրոֆեսիոնալիզմի մասին։

Ս. Սարգսյանն իր մանկավարժական հարուստ փորձը կիսում է սերնդակիցների հետ։ Ունի տպագրված մի շարք մասնագիտական հոդվածներ, որոնք լույս են ընծայվել «Լուսարար» թերթում, «Կրթությունը և գիտությունը Արցախում» համադեսում։

Բազմաթիվ սաներ նրա շնորհիվ խորացրել են իրենց գիտելիքները մաթեմատիկայից և ընտրել բնագիտամաթեմատիկական մասնագիտություններ։

2012թ. աշնանը Ս. Սարգսյանը մասնակցել է ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ թեքումով դպրոցում կազմակերպված ՀՀ և ԱՀ մաթեմատիկայի ուսուցիչների գիտամեթոդական սեմինարին և Բեհնուր Փախչինյանի հիշատակին նվիրված մրցույթում հաղթող է ճանաչվել՝ արժանանալով հատուկ վկայականի և պարգևի։ Առայսօր էլ նա սիրահարված է իր մասնագիտությանը՝ բացահայտելով մաթեմատիկայի բազմաթիվ գաղտնիքներ։

Ս. Սարգսյանն իր դասերը վարում է մատչելի՝ մաթեմատիկական ամեն քայլ կապելով կյանքի ու առօրյայի հետ, արդիականացնում է դասը և աշակերտներին մղում ինքնուրույն որոնողական քայլերի։ Նա աշակերտներին հասանելի է դարձնում բանաձևերի գործածությունը, և սաները սիրով են մասնակցում մաթեմատիկայի դասերին։ Դասերն ամրապնդում է կրկնություններով և դատողական հարցերով։

Ս. Սարգսյանը Շուշիի լավագույն մաթեմատիկոսն է։ Նա ստեղծել է ներդաշնակ ընտանիք, ուր ինքն ու իր կինը՝ հայրց լեզվի և գրականության ուսուցչուհի Լ. Մկրտչյանը, լրացնում են մեկը մյուսին փոխընթացման մթնոլորտում, որտեղ համերաշխ մթնոլորտում կրթվել և հասակ են առել երեք որդիները՝ բոլորն էլ ընտրելով հոր մասնագիտությունը։ Ավագ որդին՝ Վահագնը, աշխատում է «Եգմիկ Մոսթան» արհեստագործական ուսումնարանում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ։ Միջնեկը՝ Սոսը, աշխատում է «Ինստիտուտ» ծրագրավորման կենտրոնում՝ որպես ծրագրավորող։ Կրտսերը՝ Դավիթը, ԱրՊՀ մաթեմատիկայի բաժնի 3-րդ կուրսի ուսանող է։

Մերուժան Սարգսյանը ներամփոփ անձնավորություն է, մտքին՝ դժվարագույն խնդիրների ճշգրիտ ու ռացիոնալ լուծումներ, նորանոր հայտնաբերումներ։ Նա մարդ-մտածողի եզակի տեսակ է՝ իր լայնախոհությանը և խոր տրամաբանությանը, որի գեներն իրեն են փոխանցվել սիրելի մորից՝ Լուսայից ու հետո՝ որդիներին։ Ասել է թե՛ առողջ սերմերն արգավանդ հողում լավ ծիլեր են տվել...

Լրացել է մեծատառով մարդու, հայրենիքի պաշտպանի և մաթեմատիկայի անխնայ նվիրյալի ծննդյան 60 տարին։ Նրան բարեմաղթելով նորանոր ձեռքբերումներ և միանալով Շուշիի Ս. Արքայանի անվան միջնակարգ հոսքային դպրոցի ուսուցիչների շնորհավորանքներին՝ ցանկանում են մասնագիտական նորանոր հաջողություններ իր բազմամյա գործունեության մեջ։

2018թ. մանկավարժական բազմամյա գործունեության համար Մերուժան Սարգսյանը ԱՀ նախագահի կողմից պարգևատրվել է «Երախտագիտություն» մեդալով։ Հոբելյարին մաղթենք նորանոր ձեռքբերումներ։ Մարդ, որի վաստակը մեծ է աշակերտներին ճշգրիտ գիտությամբ զինելու գործում։

Վարդիթեր ՀԱԿՈՒՅԱՆ

ԱՆՈՒՆ ԲԱՐՉՐ ՈՒ ՎՍԵՍ

ԱՅՍԴԵՍ ՄԻ ԱՆՎԱՍ ԷԼ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԴԱՐՉԱՎ ԱՄԵՆՔԻՆԸ

Մեծերը բոլոր դարաշրջանների ու բուր սերունդների համար միշտ մնում են բարձր ու վսեմ: Նրանք երբեք չեն իջնում փառքի պատվանդանից, միշտ մնում են իրենց բարձունքում, քանզի նրանց այդ անունով՝ Մեծ, կրթել է ժողովուրդը: Իսկ ժողովուրդը իմաստուն է, երբեք չի սխալվում:

Այդ բացառիկ գնահատանքին արժանացած մեծերից մեկն էլ «Անհաս Արարատն է մեր նոր քերթության»՝ մեր ազգի պարծանք ու հպարտություն Յուզիանյան Թումանյանը:

«Ամեն հանճար չէ, որ ժողովուրդ է ներկայացնում... որ վայելում է ժողովրդի մեծ սերը, որ ապրում է նրա համար: Թումանյանն ամբողջովին ժողովուրդն է ամփոփում իր մեջ: Ամեն սերունդ ունի իր թումանյանը, ամեն տարի, ամեն օր ունի իր թումանյանը...», - այս խոսքով է բացում իր կազմակերպած թումանյանական միջոցառումը Ասկերանի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Մագուրա Գարուբյանը: Միջոցառում, որ տպավորեց հանդիսատեսին ոչ թե նրանով, որ վեր հանվեցին մեծ անհատի թողած հսկայական ժառանգությունը, նրա մարդկային արժանիքները, այլ նրանով, որ մի սերունդ էլ մոտիկից հաղորդակից դարձավ ժողովրդի խոր սերն ու հարգանքը վայելող գրողի համամարդկային գաղափարներին ու դարձավ դրանց կրողը:

11-րդ դասարանի աշակերտները մեծ պատասխանատվություն էին ցուցաբերել՝ արժանիորեն ներկայացնելու իրենց թումանյանները: Ահա թումանյանի պապը՝ հյուրասեր, սրախոս ու զվարճասեր մի մարդ, որ իր տան պատի տակին՝ ճանապարհի վրա, հատուկ տասներկու քար էր տաշել տվել, որ գյուղացիները զան մատեն ու զրույց անեն: Բնավորության այս գծերով ու արտաքինով, ասում են, թումանյանը նման էր իր պապին: Ամբողջ Լոռի էր նրան սիրում ու լսում: Իսկ 108 տարեկան հասակում էլ՝ մեռնելիս ցավով բացականչել է. «Այ փուչ աշխարհ, արժե՞ր երկու օրվա համար ծնվել...»: Թումանյանի հայրը՝ Տեր-Թադևոսը, և ժառանգել էր ազնվական (այս բառի ընդգրկումն իմաստով) տոհմի արժանավոր հատկանիշները. «Չափազանց մարդասեր ու առատածեռն, առակախոս ու զվարճաբան, սակայն միշտ ունեն մի խոր լռելիություն: Թեև քահանա, բայց նշանավոր հրացանածիգ էր ու ծի նստող»: Երբ խոսք էր գնում մեծ մարդկանց մասին, թումանյանն ասում էր. «Մեծ մարդու մասին գաղափար մեծ կազմել իմ հորով: Մեծ մարդ էր, զարմանալի խորը մարդ, անդունդի խորություն ուներ՝ լայն հոգի, մեծ սիրով, մեղմ բնավորություն, ժպիտը դեմքին»: Մայրը հակապատկերն էր հոր, կատարյալ սարի անչիկ, գյուղացիների խոսքով՝ «մի գիծ պախրի կով», որը, սակայն, շատ բան է տվել իր որդուն: «Ինչ որ սարի մասին գիտեմ, սովորել եմ նրանից, - խոստովանել է Գրիգորյանը, - աշխատասեր էր, նա էր կառավարում տունն ու սարը»: Ապագա գրողը շատ է կարևորել մանկական տպավորությունների նշանակությունը. «Մանկությունը մարդու կյանքի են ամենաընդունակ շրջանն է, երբ նա չորս կողմից ընդունում է, սնունդ է առնում ու զարգանում շարունակ»: Ժողովուրդն ու հայրենիքը՝ Լոռու չքնաղ բնությունը, նահապետական միջավայրն ու այնտեղ ապրող մարդիկ, եղել են այն շոշոկ ու անսպաս շտեմարանները, որոնցից սնունդ է առել ու բարձր գիտակցությամբ, նրբաճ երանգներով ժողովրդին մատուցել թումանյանը: Իր բազմաշարձար ու տառաայլալ հայրենիքին ինչ-որ նպաստ բերելու ուղին տեսել է նաև բազմանդամ ընտանիքների մեջ, որտեղ շատ երեխաներ պիտի աճեն, ու իր անձնական օրինակով ապացուցում էր դա՝ հայրենիքին պարզապես տասը երեխա՝ վեց աղջիկ ու չորս տղա, որոնց անուններն անգամ, ինչպես հետագայում հիշում է Նվարդ Թումանյանը, «Հայրիկը երեխաների անունները դնում էր խնամքով: Սեղան 16-րդ դարի իշխանուհու անունն է: Լևոն Շանթին այդ անունը շատ դուր եկավ, և նա էլ այդ անունով իր «Հին աստվածների» հերոսուհուն կնքեց: Մեր անուններից երեքը Բաֆֆու

«Սամվել» վեպից է առնված՝ Մուշեղ, Աշխեն, Նվարդ: Արեգի անունը դրել է Ղազարոս Աղայանը: Հայրիկն Աղայանին գրել էր, թե մի երեխա էլ ավելացավ, և ստացել է պատասխան՝ թե աղջիկ է, անունը դիր Արեգնազան, թե տղա է՝ Արեգ: Պատահական չէ, որ հենց բազմազավակությունը խթանելու նպատակով է Ավետիս Ահարոնյանին ասել այս խոսքը. «Ավիկ ջան, տես, ես ունեմ 10 երեխա: Եթե իմ յուրաքանչյուր զավակ ինձ պես մտածի, ես կունենամ 100 թռչ, եթե թռչներս էլ ինձ պես մտածեն, կունենամ 1000 ծոռ: Մի խոսքով՝ վեց սերունդ հետո միայն ինձնից մեկ միլիոն հայ կծնվի...»:

Օրինապաշտ ընտանիքում բոլորն առաջնորդվում էին մեծ կարգապահության, հայրիկի հոգատարությունն էլ ամխոր բոլորի հանդեպ չափ ու սահման չուներ:

Մեծ Հայի մկրտումի դոկտորներին մեկն էլ «Վերնատուն» գրական խմբակի կազմակերպումն էր իր իսկ տանը, որի մշտական անդամներն էին Ղազարոս Աղայանը, Ավետիք Իսահակյանը, Լևոն Շանթը, Դերենիկ Դեմիրճյանը և Նիկոլ Աղբալյանը: Ղազարոս Աղայանն ընդունվել է այդ խմբակում իբրև նահապետ. նա պատվավոր անդամ էր «Վերնատանը»: Թումանյանի նպատակն էր կանոնավոր կերպով ուսում-



նասիրել համաշխարհային գրական մեծերի՝ Շեքսպիրի, Բայրոնի և Հայնեի ստեղծագործությունները, պաշտամունքի առարկա դարձնել համաշխարհային դասականներից և ընթանալ նրանց ուղիով:

Այսպիսի հոգևոր ներուժ ունեցող մարդն էլ, բնական է, կունենար հարուստ գրադարան, որն ազգային գրողների գրադարանում երրորդն է (Լև Տոլստոյ՝ 30 հոգար գիրք, Գյոթե՝ 15 հազար, թումանյանը՝ 10 հազար):

Երբ 1953թ. թումանյանի կնոջ և աղջիկների ջանքերով քիֆլիսյան տնից իրերը տեղափոխվեցին Երևան, և վերստեղծվեց քիֆլիսյան տունը, գրողի կարևոր 10 իրերն էին տեղ գտել նրանց մեջ՝ Օլգայի (կնոջ) երգարանը, ամերիկյան արտադրության կոշիկները, որ թատրոնի դերասանները խնդրում էին Համլետի դերը կատարելիս, ճապոնական ջեռակները (գրպանում էին՝ ձեռքերը տաքացնելու համար), «Հայուհու զուլխը» կտավը, «Իլյա Մուրոմեց» պահարանը (գնել էր Իլյա Մուրոմեցի մասին բիլիմայի թարգմանության հոնորարով), քառյակների տուփն ու թախտը (գրում էր թախտին պառկած, թույլ էր), արծաթյա նոթատետրը (նվիրել էին 50-ամյակին), ցուլի արձանը, 13 պահարաններում պահվող գրքերը՝ «Խնդրում եմ չծխել և գիրք չխնդրել» գրությամբ (2000 գիրք տարել էին ու չէին վերադարձրել), պատի դեղատուփը և թումանյանի սիրտը:

Մտահոգ իր ժողովրդի ճակատագրով, դատեր՝ Նվարդի հետ Եղեռնի ժամանակ մեկնեց Եվրոպայի ու օգնություն ցուցաբերեց հայ որբուկներին: Հետագայում այդ որբերից մեկն էլ՝ Գուրգեն Մահարին, պիտի գրեր. «Եկավ Հովհաննես Թումանյանը և շրջապատեց իրեն որբերով: Հետագայում, երբ ես կարդացի նրա «Հոգեհանգիստը», ինձ քվաց, որ նա հենց այդ օրը՝ մեզանից անջատվելուց հետո գրեց այն.

Ու վեր կացա ես, որ մեր հայրենի օրենքով հիմ

Վերջին հանգիստը կարդամ իմ ազգի անբախտ զոհերին,

Որ շեն ու քաղաք, որ սար ու հովիտ, ծովից մինչև ծով

Մարած են, մեռած, փրոզված ու ցրված հազար հազարով...»:

Պատմում են, որ երբ կաթողիկոսը մեր-

ժում է վանքապատկան մի տուն և տրամադրել գաղթականներին, թումանյանն ընդդիմանում է և գաղթականներին լցնում մինչև այդ անձեռնմխելի վեհարանը, վեհափառը զայրացած ասում է.

- Հիշեցե՛ք, պարոն Թումանյան, որ ես Ամենայն Հայոց կաթողիկոսն եմ:

- Իսկ ես՝ Ամենայն Հայոց բանաստեղծ, պատասխանել է Թումանյանը:

Հայոց վշտով տառապող բանաստեղծը «մերթ զայրացկոտ ծառս եղավ մինչև երկինք կապուտակ, մերթ հոգնած սուզվեց, իջավ դեպի խորքերն անհատակ...»:

Պատահական չէ, որ նման մարդուն կորցնելու վտանգը, անշուշտ, պիտի մտահոգեր բոլորին, առանձնապես հարազատներին: Ծանր վշտեր կրած Թումանյանը չէր կարող դիմանալ այդ ամենին, և 1922թ. ծանր հիվանդ վիճակում նրան բուժման են տանում Մոսկվա, բայց հանճարի կյանքը փրկել չի հաջողվում: Գուցե կորստյան այդ խոր ցավը մեղմելու նպատակ է ունեցել բանաստեղծի որդին՝ Արեգը, որ խիզախ քայլ է արել՝ դրա մասին հայտնելով եղբորը՝ Համլիկին. «Ես մի քայլ արեցի... Ես հայրիկի սիրտը գողացա: Ե՛հ շատ է, պետք է շատ հանդուգն լինել գողանալ էն սիրտը, որ գրկում էր ամբողջ աշխարհը, պետք է շատ իրեն կորցնել, որ մոտ գալ, բայց իմ սիրտը չդիմացավ, գողացավ: Գուցե մեղադրում ես, ոչինչ: Թող իմ հոր սիրտը լինի մեր տանը: Ե՛հ շատ է, նա չի բաբախում, բայց չէ՞ որ հայրիկը ամբողջ սրտի մեջ է, և հայրիկի սիրտը պիտի մեր տանը լինի»: Հարազատները տարիներ շարունակ այդ մեծ սիրտը պահում էին գրողի առանձնատանը՝ մի փոքրիկ պահարանի մեջ:

Մի օր թումանյանների տուն այցի եկած Ավետիք Իսահակյանը գիշերում է նրանց մոտ, և որպես հարազատ հյուրի՝ նրան օբևան են տալիս թումանյանի առանձնատանակում: Առավոտյան Իսահակյանը խոստովանեց, որ ողջ գիշեր չի քնել, պատճառը՝ թումանյանի սրտի ներկայությունն էր:

Շուտով բանաստեղծի սիրտը տեղափոխվեց Երևանի բժշկական ինստիտուտի թանգարան, իսկ 1994-ին մեծ սիրտը հողին հանձնեցին հայրական տան բակում: Ինչպե՞ս դիմանար սիրտը, ինչպե՞ս չմորմոքվեք, երբ բանաստեղծի մտքի ու հոգու հայացքի առջև հառնում են ջարդարար հիմնականների անմարդկային արարքները, ոչնչացնում, թալանում են մարդկանց ու այն ամենը, ինչ դարեր շարունակ ստեղծվել է: Տրորում են երկրի երեսը, նրա ծաղկավառ դաշտերը... Սակայն որքան էլ ջարդված ու վիրավոր, միևնույն է, այդ ժողովուրդը հույսը սրտում շարունակում է իր ճամփան դեպի հեռավոր աստղեր...

Մեծ միջոցառման ընթացքում, իհարկե, դժվար էր ընդգրկել գրողի հարուստ ու բազմաթիվ ժառանգությունը, բայց մասնակիցներն ամեն ինչ արել էին՝ արժանի մատուցելու գրականության երախտավորին:

Ամենահետաքրքիր մասը, որ տպավորեց հանդիսատեսին, փոքրիկների՝ 3-րդ դասարանի սաների ելույթն էր: Շնորհալի դասվար Քրիստինե Օհանյանը նոր լուծումներ էր հաղորդել թումանյանի հեքիաթներին, որի հերոսներին մեծ շուքով ու սիրով ներկայացրին 3-րդ դասարանցիները: Նրանք ուղղակի կերտեցին այդ հերոսներին: Մեկ անդես էին գալիս Ամբաս Գուրգենի ու Քաջ Նազարի, մերթ Տեր ու Ծառայի և Սուտասանի, մերթ Պոչատ աղվեսի ու Կիկոսի դերերում: Դասավորի նվագի (դաշնամուր) ուղեկցությամբ երեխաները մանկական պարզ ու անկեղծ աշխույժով ու ոգևորությամբ ներկայացրին իրենց հերոսներին, որի համար էլ հանդիսատեսը վարձատրությամբ եղավ բուռն ծափերով ու հիացական բացառաբացությամբ:

Այսպես մի անգամ էլ թումանյանը դարձավ ամենից: Ե՛հ շատ է նկատել Վալերի Բրյուսովը՝ այսպիսի գնահատական տալով. «Հովհաննես Թումանյանը այն կախարհ է, այն Այվազովսկին, որ վրձինը ձեռքին գոչում է տարերքին և հնազանդեցնում իրեն»:

Սուրբայր ԴԱԶԱՐՅԱՆ

Հովհ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ



Երբ որ զարչելով տեսնում եմ շուրջս Մուլեգնած կյանքի պատկերը ցավոտ, Հաճախ, մանկություն, խռոված հոգուս Ներկայանում ես ինչպես առավոտ:

Եվ մանկան նման արտասվում եմ ես, Երբ այս օրերում, չարությամբ լցված, Քեզ, սուրբ մանկություն, հիշում եմ ինչպես Երազի տեսիլք անհետ չըբացած:

Ինչպես արևի ճաճանչը վերջին թռչում է հանկարծ, տիրում է խավար, Այնպես շողացիր և անցար կրկին, Մնացի անգոր, ցուփ կյանքին ավար:

Թե հնար լիներ մի անգամ դարձյալ Դառնալ քո գիրկը... ախ, ի՞նչ եմ ասում, Այդ անհնար է. արդեն հանդերձյալ Կյանքի ճամփան է իմ առջև բացվում:

Բայց մինչև այնտեղի սոսկալի՝ ուղի, Ահա բռնություն, պատիվ անարգած, Ահա հառաչանք, արտասուք արի, Ահա սև նախամե և սեր սակարկած...

Կըմեռնեմ և ես այս ցավերի տակ Ինձ հետ տանելով շատ իղձ ու փափագ, Իսկ այս աշխարհից և ոչ մի պասկ - Միայն քո անմեղ, քո սուրբ հիշատակ:

Մի տխրատեսիլ գուցե գերեզման Անցվորականից խնդրե մի բերան Ողորմի ասել... ո՞վ գիտե, և այն Կըլինի՞՜ արդյոք, կըմայե՞ն ճորան...

ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔ

Հեռու, ո՞վ սուրբ խաղաղություն, Մենք քեզ համար չունենք անկյուն Մեր հալածված հայրենիքում Եվ մեր ցաված սրտի խորքում:

Գնա դեպի այն լեռները, Ուր որ հովիվն ու գառները Ապահով են պատառողից, Մենք ազատ չենք ահ ու դողից:

Գնա, հանգիստ այն դաշտերում, Ուր որ իրար էլ չեն տիրում Եղբայր-մարդիկ, և հերկելով Քեզ օրհնում են սուրբ երգերով:

Գնա դեպի երանավետ Այն վայրերը, ուր կյանքի հետ Խաղ չեն անում զվարճության Կան հեշտության համար միայն:

Իսկ մենք ցավով լեցուն սրտով Անկարող ենք միշտ անվրդով Եվ քուրդերի լուծը տանել, Եվ քեզ օրհնել, փառաբանել:

Հեռու, ո՞վ սուրբ խաղաղություն, Մենք քեզ, իբրև մի լուկ անուն, Երանության միշտ հիշելով, Պիտի կռվենք մեռցնող սրով:

ԱՌՈՐՅԱ

ԹՈՒՄԱՆՅԱՆՈՎ ՆԵՐՇՆՉՎԱՆ

Յե՛ն ազահ մարդ, հե՛ն անգոհ մարդ, միտքըդ երկար, կյանքըդ կարճ, Քանի՜-քանիսն անցան քեզ պես, քեզ-մից առաջ, քո առաջ...

3. Թումանյան

Մեծն Թումանյանին ոչ միայն պետք է կարդալ, այլև պետք է ընկալել, հասկանալ, ըմբռնել: Ուղղորդվելով այս սկզբունքով՝ Շահումյանի շրջանի Նոր Դարաչինարի միջնակարգ դպրոցում տնօրեն Ռուզաննա Ալլահվերդյանի անմիջական մասնակցությամբ ուսուցիչներն սկսեցին Թումանյանական օրերի միջոցառումների քննարկումը: Ասես սամունքի մրցույթ լիներ, թե ով ավելի լավ է ծանոթ Մեծն Թումանյանի ստեղծագործություններին: Եվ այդ բուն քննարկումն ավարտվեց հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ալիսա Գրիգորյանի անակնկալ առաջարկով՝ բեմադրել Թումանյանի «Անուշ» պոեմը: Ազնվորեն մի պահ տարակուսեցինք, քանի որ աղջիկների քանակը դպրոցում ավելի քիչ է, քան տղաների: Բայց առաջարկից չհրաժարվեցինք: Մեր ոգևորությունը փոխանցվեց երեխաներին: Կարճ ժամանակում ընտրվեց համապատասխան հատվածը, բաշխվեցին դերերը, և ողջ դպրոցը սիրահարվեց Անուշին: Սկսվեցին նախապատրաստական աշխատանքները, որոնց ներգրավվել էին թե՛ մանկավարժները, թե՛ տեխնիկական կազմը, իսկ ուսուցչուհի Ալիսա Գրիգորյանը կարծես ապրում էր այդ գաղափարի իրա-



ավագ մասնագետ Աստղիկ Նալբանդյանը, վարչակազմի այլ աշխատակիցներ: Միջոցառումն անց էր կացվում Մայրենիի օրվա շրջանակներում, ուստի մինչև «Անուշ» պոեմի բեմականացումը մայրենիին նվիրված փոքրիկ հանդեսով (դասվարժներ էլ միտք վարդանյանի և Ալինա Յակոբյանի ղեկավարությամբ) ելույթ ունեցան 1-5-րդ դասարանների աշակերտները: Երբ վարագույրը բացվեց, բոլորին անակնկալ էր սպասվում: Փոքրիկ բեմն իրենից ներկայացնում էր թումանյանական ժամանակ-

ների Լուսն ավանդական գյուղական տներից մեկը՝ համապատասխան կահավորանքով. կուժ և կուլաներ, բուրդ գգելու սամոդեր, թել մանելու իլիկ, ինքնաեռ, լացող ուռենի, որի տակ իր չար բախտն է լալիս Անուշը, հնամյա գորգեր ու կարպետներ, իսկ փոքրիկ դերասանները ժամանակաշրջանին բնորոշ հագուստներով էին, ինչն ամբողջությամբ լրացնում էր թումանյանական բեմական տունը: Փոքրիկ դերասաններն այնքան մեծ ոգևորությամբ էին խաղում, այնպես իրական, որ չհուզվել հնարավոր չէր: Աղջիկները շատ բնորոշ ներկայացրին վիճակահանության դրվագը, այնքան գեղեցիկ և իրական, ինչն անսպասելի էր: Չեմ կարող չնշել Էլլայի, Աննայի, Տաթևիկի, Բելայի և Անուշի մոր՝ 12-րդ դասարանի աշակերտուհի Էմմայի դերակատա-

րումները: Անհնար է մոռանալ, թե ինչպես է մայրը հուզված կանչում. «Անուշ, այն աղջիկ, Անուշ, մութն ընկավ, տունն արի»: Գուցենք կրկնապատկվեց Անուշի խելագարության պահին, որն Անուշի դերակատար Վարդ Դանիելյանը խաղաց գերազանց:

Տեսե՛ք, տեսե՛ք դափ ու զուռնով Ի՞նչ հարսնիք է դուրս գալի, Մարդիկ ուրախ, թոն ու ծյունով Ձի են խաղում, չափ տալի... Աղջի՛, աղջի՛, մըտիկ արեք, Ես ի՞նչ տեսիլք ես տեսա, Ո՞վ է տեսել էսպես հարսնիք - Ո՛չ հարս ունեն, ո՛չ փեսա...

Ուզում եմ գովասանքի խոսք ասել նաև մեր տղաներին՝ իրենց բնական դերակատարման համար. Մոսի-Արսենին, Սարո-Արմենին, հեղինակ-Դավիթին, քահանա-Արամին և մյուսներին: Բեմականացումն ավարտվեց, իսկ ծափերը չէին լռում:

Ավարտից հետո ելույթ ունեցան շրջվարչակազմի ղեկավար Գագիկ Մարտիրոսյանը, որը դպրոցին նվիրեց «Լեռնային Դարաբաղի ատլաս» քարտեզների ժողովածուն և վարչակազմի կրթության բաժնի վարիչ Խորեն Վարդանյանը:

Օրը հազեցած էր, տպավորություններով լի: Ոչ ոք չէր ուզում հեռանալ դպրոցից, բաժանվել Թումանյանից:

Ալվարդ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Շահումյանի շրջանի Նոր Դարաչինարի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի



ԱՆԽԱՏԱՆՔՈՒՄ ԵՈՒՆԴՈՒՆ

Կան մարդիկ, որոնց մասնագիտությունը տրվում է վերուստ: Նման երջանիկներից է Մարտունու Մեսրոպ Մաշտոցի անվան հ.2 դպրոցի դասվար Նունե Բալայանը՝ հոգատար ու եռանդով լեցուն, որը մանկավարժական տարիների ընթացքում գործընկերների, սաների ու ծնողների կողմից վաստակել է սեր և հարգանք: Որպես տարրական դասարանների ուսուցչուհի՝ լավ գիտի բոլոր առարկաների ծրագրային նյութերն ու դրանց դասավանդման մեթոդները, ինչպես նաև հրաշալի գիտի դեպի մանուկների սրտեր տանող ճանապարհը, ինչի շնորհիվ շատ կարճ ժամանակում



տալանների բարձրացումն է առարկայի նկատմամբ:

Դասարանի կահավորվածությունը համահունչ էր բեմային, երեխաներն էլ իրենց գիտելիքներով, ակտիվությամբ ծախում էին մաթեմատիկայի կախարդական աշխարհում: Նրանք իրենց ակտիվությամբ, տրամաբանությամբ, երգերով ու պարերով հիացրին ներկաներին և մեզ ապացուցեցին, որ կարճ ժամանակում, իրոք, շատ գիտելիքներ են ստացել դպրոցում՝ ընկերացել են թվերի ու երկրաչափական պատկերների հետ, կարողանում են հաշվել, գումարել, հանել, քիվը մեծացնել և փոքրացնել, լուծել և կազմել խնդիրներ, որը ոգևորեց բոլորին: Եվ այդ ամենը՝ շնորհիվ սիրելի դասվարի, որն անմնացող սիրով ու նվիրումով է լցված իր սաների հանդեպ:

Գեղեցիկ և օրինակելի դաս կազմակերպելու համար շնորհակալություն հայտնեց դպրոցի փոխտնօրեն Ալվարդ Ահարոնյանը: Ուսուցման և դաստիարակության մեջ սկզբունքային մանկավարժական վերաբերմունքի, սաների առջև գիտության գանձարանի դարպասները բացելու համար երախտագիտության խոսք հղեցինք նաև ծնողներս: Երեխաներն ապացուցեցին, որ մաթեմատիկայի կախարդական աշխարհի տանող ճանապարհի առաջին և ամենակարևոր բանալին իրենց ձեռքում է:

Թող Աստված խաղաղություն պարզիկ Արցախ աշխարհին, երեխաներին՝ առողջություն և անհոգ մանկություն, իսկ մանկավարժներին՝ նոր ուժ ու անսպառ եռանդ առողջ և կիրթ սերունդ դաստիարակելու համար:

Ալվարդ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Առաջին դասարանի ծնող ք. Մարտունի



Որանց համար դարձել է երկրորդ մայր: Որպես առաջին դասարանի դասվար՝ նրան հաջողվել է այս կարճ ժամանակահատվածում կազմակերպել ծնողական ժողովներ, անհատական հանդիպումներ ծնողների հետ, առարկայական դաս-միջոցառումներ: Օրերս նա կազմակերպեց հեթոթական դաս-միջոցառումը մաթեմատիկայից «Մաթեմատիկայի կախարդական աշխարհը» խորագրով, որին ներկա էին դպրոցի ուսուցիչներ և ծնողներ: Դասի սկզբում Ն.Բալայանը նշեց, որ միջոցառման նպատակը երեխաների հե-

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԿԱՅԻՆ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱՎՆ ՈՒ ՊՍԱԿՆ Է...

Մայրության և գեղեցկության տոնին Քերթի բնակիչներն սպասում են սովորականի պես: Սակայն այդ օրն անմախաղեպ էր համայնքի բնակիչների համար: Բոլորը խանդավառությամբ շտապում էին համայնքի ակունք՝ համերգի: Բնակիչների համար հերթական գեղեցիկ անակնկալն էր կազմակերպել բարերար, մայրական կողմով համագյուղացի Աշոտ Ջիվանյանը: Գյուղ էր հրավիրել Ստեփանակերտի

բան ունեց:

Այնուհետև բեմահարթակը տրամադրվեց Արցախի պարի պետական համույթին: Իր անզուգական ասունքով ներկաներին տոնի առթիվ շնորհավորեց Սամվել Եվրիյանը: Նա նույնպես մարդեղ առողջություն, արցախյան երկարակեցություն և անսահման սեր հայրենիքի, հողի, ընտանիքի նկատմամբ: Նշեց, որ մշակույթը հայ ժողովրդի ստեղծած նյութական և հոգևոր արժեքների ամբողջությունն է: Բարերար Աշոտ Ջիվանյանի շնորհիվ մեր հասարակությունը հարողորակվեց ազգային երգ ու պարին:



պարի պետական և «Մենք ենք, մեր սարերը» ազգագրական երգի-պարի պետական համույթներին: Դամերգը վարում էր Արցախի վաստակավոր արտիստ Սամվել Եվրիյանը: Ներկա էին համայնքի ղեկավար Կիմա Գրիգորյանը, բարերարի մայր Իրա Ջիվանյանը, «Մոնթե-Ավո» բարեգործական ընկերության գործադիր տնօրեն Արմիդա Գրիգորյանը, ուսուցչական կոլեկտիվը, հյուրեր:

Բացման խոսքում «Մոնթե-Ավո» բարեգործական ընկերության գործադիր տնօրեն Արմիդա Գրիգորյանը շնորհավորանքի խոսք ասաց.

- Դա կլինի միշտ մարմնավորել է անանց գեղեցկություն, քնքրություն, համեստություն, մեծահոգություն: Արցախյան պատերազմի ժամանակ ամուր պահելով տղամարդկանց թիկունքը՝ կանայք չեն զիջել նրանց մարտի դաշտում՝ կռելով մեր ընդհանուր հաղթանակը, որը հնարավոր դարձավ նրանց տոկունության, անձնուրացության, խիզախության շնորհիվ: Եղեք միշտ առողջ, ուրախ ու երջանիկ, սիրելի կանայք, քանզի հպարտանալու շատ

բան ունեց:

Այնուհետև բեմահարթակը տրամադրվեց Արցախի պարի պետական համույթին: Իր անզուգական ասունքով ներկաներին տոնի առթիվ շնորհավորեց Սամվել Եվրիյանը: Նա նույնպես մարդեղ առողջություն, արցախյան երկարակեցություն և անսահման սեր հայրենիքի, հողի, ընտանիքի նկատմամբ: Նշեց, որ մշակույթը հայ ժողովրդի ստեղծած նյութական և հոգևոր արժեքների ամբողջությունն է: Բարերար Աշոտ Ջիվանյանի շնորհիվ մեր հասարակությունը հարողորակվեց ազգային երգ ու պարին:

Չայրենասիրությունը մարդկային առաքինությունների թագն ու պսակն է: Այսօր ունենք բավականին առաջընթաց թե՛ մշակութային, թե՛ հոգևոր և առհասարակ բոլոր ոլորտներում, պատկերը նույնը չէ, ինչ էր սրանից մի քանի տարի առաջ: Պետականաշինության մեջ իրենց առանձնահատուկ տեղն ունեն մեր բարերարները:

Մեծ էր հիացմունքն ու ուրախությունը. շատերն առաջին անգամ էին ականատես լինում նման միջոցառման: Գյուղական փոքրիկ բեմի վրա էին արհեստավարժ երգիչներն ու պարողները:

Վերջում համայնքի ղեկավար Կիմա Գրիգորյանը շնորհավորեց կանանց ու աղջիկներին, առանձնահատուկ՝ տիկին Ջիվանյանին և համայնքի բնակիչների անունից իր երախտագիտությունը հայտնեց բարերարին, նրա ընտանիքի անդամներին հայրենի գյուղին նման բարձր ուշադրության ու վերաբերմունքի արժանացնելու համար:

Ես նույնպես ուրախ եմ, և ապրում եմ այն անսահման հպարտության զգացումը, որ կարող է պարուրել ազգային արժեքներին մշտապես հավատարիմ և դրանց նվիրյալ ջատագով ու պաշտպան իմ հայրենակիցներին:

Անուշ ԲԱՍՄԱՅԱՆ
գ. Քերթ

ԿԵՆՍԱԿԵՐՊ

ԳԵՂԱԳԵՏ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԼՈՒՍԵՂԵՆ ՃԱՆԱՊԱՐԿՐ



Այո՛, կարելի է տաղանդներ ու հանճարներ ունենալ, բայց ունենալու համար պետք է գնահատել ու պաշտպանել, իսկ գնահատել ու պաշտպանել, արդեն վաղուց ասված է, կնշանակի՝ ստեղծել:

Յուրա Բեգլարյան

Յուրա Բեգլարյանը ծնվել է 1949թ. ապրիլի 1-ին Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղում, արիեստավորի ընտանիքում:

1967-1968 ուստարում ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը և ընդունվել Ստեփանակերտի սովխտգտեխնիկումը և աշխատանքի անցել Կարմիր շուկայի խաղողագործական սովխտգտում:

1969-1971թթ. պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել ՂՍՄԳ Լեհինական քաղաքում տեղակայված N զորամասում. եղել է զորամասի գրագիրը, նկարիչ-ձևավորողը: Բանակում ընդունվել է ՄՍԿԿ անդամության թեկնածուների շարքերը, հետագայում էլ՝ անդամագրվել:

Ծառայությունից վերադառնալով՝ նշանակվել է հայրենի գյուղի մշակույթի տան տնօրեն, միաժամանակ հասարակական հիմունքներով՝ տեղամասային կոմերիտկազմակերպության քարտուղար: Բազմակողմանիորեն հագեցած ու իմաստակից էր այս երիտասարդի առօրյա կյանքը:

1974թ. Յուրա Բեգլարյանը գործուղվել է Մոլդավական ՍՍՀ՝ որակավորման դասընթացների, ինչի հաջող ավարտից հետո վերադարձել է գյուղ: Բայց ղեկավարության կողմից իր մասնագիտությամբ աշխատելու աջակցություն չստանալու պատճառով ստիպված գյուղի դպրոցում տնտեսվար աշխատեց:

Սակայն նրա մեջ կրթություն ստանալու և ամենատարբեր բնագավառներից գիտելիքներ ձեռք բերելու ձգտումը միշտ էլ հախտուն էր ու անհահանջ: Մշտապես ձգտել է հարդրակից լինել կյանքի առաջընթացին:

Մարդը, որ սովորելու համար բավականին ծեր է, հավանաբար միշտ էլ այդպիսին է եղել:

Յուրա Բեգլարյան

Յուրա Բեգլարյանն այն եզակի մարդկանցից է, որ իր գիտակցական կյանքում միշտ իրեն աշակերտ և ուսանող է զգացել. տարիքը երբեք նրա համար խոչընդոտ չի եղել:

1983-1987թթ. ավարտել է Բաքվի միջազգային գեղարվեստի ուսումնարանը բարձրագույնի կարգավիճակով և ստացել գերազանցության դիպլոմ, ստացել նկարիչ-ձևավորողի մասնագիտական առաջին կարգի որակավորում: Այս առումով գործունեության մեծ հնարավորություններ ուներ քաղաքում, բայց առանց երկմտելու վերադարձավ ծննդավայր ու տեղի միջնակարգ և Ջարդանաշենի 8-ամյա դպրոցներում աշխատեց որպես կերպարվեստի և գծագրության ու սուցիչ:

Միաժամանակ զբաղվում էր նկարչությամբ և քանդակագործությամբ:

Շողեր, շաղեր, Կարդի թաղեր, Թաղավարդ...

Ա. Գրաշի

Այն հրաշք բնությունը, որն ունի «սարերի հարս» Թաղավարդ գյուղը՝ Քիրսի ստորոտում, ստեղծագործելու ոգի և անսպառ ուժ է ներշնչել հայրենի եզերքի նվիրյալ ու անբաժան զավակին՝ Յուրա Բեգլարյանին՝ «միշտ սրտաբաց ու միշտ բարի» այս դարաբաղուն:

Նա ուսուցիչներին օգնում էր կաթինետների ձևավորման գործում: Առավել ևս արվեստի կաթինետն էր խնամքով ձևավորում ու կահավորում, որտեղ ցուցադրված էին իր և սաների ուշագրավ աշխատանքները:

Արցախյան շարժման նախօրեին նա բազմասյուժետային նկարների մի խմբաքանակ էր տրամադրել, որ ցուցադրվի Մարտունու քաղաքի

դպրոցներում ու մանկապարտեզներում: Բայց իրավիճակի հետագա սրացումների պատճառով դա չիրականացվեց: Ափսոսանքով են ասում: Յուրա Բեգլարյանը արցախյան շարժման և Գոյամարտի ակտիվ մասնակից է: Հայրենյաց արհավիրքին դժբախտություն ունեցավ՝ զոհվեց տղաներից ավագը: Այսօր նա վիշտը վեհանձնորեն է հաղթահարում: Նույնիսկ իր մեջ ուրիշներին սփոփելու ուժ է գտնում: Եվ կարելի է ասել, որ ապրում է Ա.Էյնշտեյնի՝ իր համար նշանաբան ընտրած գաղափարով. «Բարություն, գեղեցկություն և ճշմարտություն. ահա այն տեսլականները, որոնք լուսավորել են իմ կյանքի ու

վարժի աշխատանք, որը բոլոր ջղերով կապված է իր հայրենյաց հեքի բոլոր պահերին:

Դեռևս 60-ական թթ. նա համարձակվեց կապեր ստեղծել Հ.Շիրազի հետ և նրանից էլ ստացավ Արցախ Յուրենց ծածկանունը: Բանաստեղծի երկրպագուներից էր և գաղտնի տարածում էր նրա անոթի գործերը: 1965-1966թթ. ազգային պոռթկման հետ կապված՝ թուրքիկ-բաղկեր էր տարածում: Իսկ երբ ժողովուրդն Ստեփանակերտում հանրահավաքներ էր կազմակերպում, դարձավ նրանց ակտիվ մասնակիցը, որի համար էլ վեց օրով բանտարկվեց ոստիկանատանը:

Դեռևս խորհրդային տարիներին



դին և նորից ու նորից իմ հոգում վերածնելու ուրախություն և քաջություն»:

Նա երազում էր մանկավարժական բարձրագույն կրթություն ունենալ: 2005թ. ավարտեց Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանը և ստացավ պատմության մասնագետի բակալավրի որակավորում: Մինչ այդ 1997-2004թթ. պետության կողմից «Հայոց նեկեդեցու պատմություն» առարկայից կազմակերպվող ամենամյա դասընթացներին մասնակցել և դասավանդելու վկայական էր ստացել: Իր դասավանդման աշխատանքները հնարավորինս զուգորդում էր հնագիտական ուսումնասիրություններով:

Յուրա Բեգլարյանը զոհ է քսան տարվա իր մանկավարժական գործունեությունից և թողարկած սաներից, որոնք հայրենիքին արժանի զավակներ են:

Եվ բնական է, որ այսպիսի արգասիք պետք է ունենա մի մանկա-

թղթակցում էր «Սովետական դարաբաղ», «Կոմունիստ», «Ավանգարդ», Թբիլիսիի «Սովետական Վրաստան» թերթերին: Անչափ ընթերցասեր է՝ գիր ու գրականության մշտաբար բարեկամը:

Ես դպրոցում աշխատել եմ նրա հետ և մոտիկից եմ ծանոթ նրա պայծառ անհատականությանը: Մի օր մոտեցավ ինձ և իրեն հատուկ խորին պատկառանքով ասաց, որ ուզում է մայրենի իր իմացությունն ավելի կատարելագործել և իմ օժանդակությունն է խնդրում: Զգիտեմ՝ ավելի շատ զարմացած էի, թե՞ հիացած նրա առաջարկով, բայց խնդրանքի չէի սպասում: Եվ իմ հարգանքը նրա հանդեպ շատ ավելի մեծացավ:

Այո՛, ավելի շատ պետք է պատասխանատու լինել իր մայրենի, այս սուրբ լեզվի իմացության համար, որ հպարտ ապրես քո հողի վրա և անկաշկանդ ու ազնիվ ստեղծագործես քո ազգի համար:

Ազգային ինքնագնահատանքը

նրան ավելի հեռուն տարավ, և նա սկսեց զբաղվել գյուղի խորն անցյալի ուսումնասիրությամբ, առանձին տոհմերի ծագումնաբանությամբ և ստեղծեց տահմածառեր, ինչն այսօր շարունակական բնույթ ունի նրա հույժ դրվատելի գործունեության չափաբաժնում:

Պարտավորված են նրան իմ խորին երախտագիտությունը հայտնել՝ հայրական կողմից իմ տոհմի տոհմածառը կատարյալ ներկայացնելու համար: Յուրա Բեգլարյանն իր բեղուն աշխատանքի շնորհիվ արժանացել է մի շարք պատվոգրերի՝ «Թաղավարդի փառքի թանգարանի ստեղծման աշխատանքներին ակտիվ մասնակցելու համար» (2012), «Մատաղ սերնդի կրթության և դաստիարակության ասպարեզում ունեցած մեծ վաստակի համար» (2012), «Տոհմածառ» հանրապետական առաջին մրցույթին մասնակցելու համար» (2014), «Տոհմածառ» մրցույթի «Իմ տոհմը» անվանակարգում երրորդ տեղ զբաղեցնելու համար (2015), «Տոհմածառ» հանրապետական 3-րդ մրցույթի «Իմ տոհմը» անվանակարգում առաջին կարգի խրախուսական մրցանակի արժանանալու համար» (2017), «Արցախյան ազատամարտի 30-ամյակին նվիրված մրցանակային պաստառ, խրախուսական մրցանակ ստանալու համար» (2018):

2012թ. Յուրա Բեգլարյանը թոշակի է անցել, բայց շարունակում է եռանդազին աշխատել «Ռեֆիսիդ» ընկերությունում: Արդեն երրորդ տարին է՝ իր հովանավորության ներքո է առել Թաղավարդի դպրոցի տարական դասարաններից մեկի աշակերտներին (որոնցից երեքն անապահով ընտանիքներից են) և նրանց տրամադրում է նյութական օգնություն ու բարոյափոխական աջակցություն նախօրոք մշակված հատուկ ծրագրով:

Նրա գերագույն երազանքն է Արցախի աշխարհը տեսնել ազատ ու անվախ:

Նոր սերունդներին պատգամում է պահել, պաշտպանել ու գեղեցկ վայելել դրախտի մասունք Արցախը հայոց:

Իրինա ԳՐԻԳՈՐՅԱՆ Մարտունու Վ.Խաչատրյանի անվան արհեստագործական ուսումնարանի հ. Լեզվի եւ գրականության ուսուցչուհի

ՄԱՐՏԱՐՎԵՏՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՆ ՀՅՈՒՐԵՆԿԱԼԵՑ ԱՆԽԱՐՀԱՆՈՉՍԿ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ

Փետրվարի 28-ին Արցախի մարտարվեստների ասոցիացիայի (միավորում է մի քանի մարզական ֆեդերացիաներ, այդ թվում՝ մուայթայի ֆեդերացիան) մարզիկների համար աշխույժ ու հետաքրքիր իրադարձություն տեղի ունեցավ: Ասոցիացիայի հրավերով Արցախ էին ժամանել աշխարհահռչակ մարզիկներ, Եվրոպայի եւ աշխարհի չեմպիոններ Մարտ Գրիգորյանը եւ Ալբերտ Ամիրջանյանը: Մարտ Գրիգորյանը GLORY եւ KUNUL FIGHT կազմակերպությունների չեմպիոն է: Մեծ էր արցախցի մարզիկների ոգեւորությունն այն առումով, որ իրենց մարզածեւով աշխարհում հայտնի եւ իրենց կողմից սիրված մարզիկների հետ, որոնց մարտերին հետեւում էին համացանցով, երկրպագուն հեռակա, այժմ հնարավորություն ունեցան ծանոթանալ, շփվել, նկարվել:

Մարտ Գրիգորյանը (77 կգ թ.կ.) 19 տարեկանից պարապել է մուայթայ, հետո նախապատվություն տվել թիք բռնքին: Ապրում է

դրոշի ներքո: Առաջին անգամ է Արցախում: Մեզ հետ զրույցում հայտնեց, որ մարզիկների հետ սեմինար-մարզումներ անցկաց-

տել՝ մեկնաբանելով, որ հաղթանակի հասնելու համար բարձր աստիճանի հասցրած տեխնիկական վճռորոշ դեր ունի:

Ալբերտ Ամիրջանյանը (65 կգ թ. կ.) 8 տարի պարապում է մուայթայ եւ թիք բռնք: Արցախցի մարզիկն ապրում է Մոսկվայում, սեմինարների է մասնակցում Բելգիայում: Արդեն երկու տարի է, ինչ առաջնություններում ներկայացնում է Հայաստանը: Մինչ այդ ներկայացնում էր ՌԴ-ն: Շատ է սիրում Արցախը: Ասում է, որ Արցախի մասին իր պատմելուց Մարտ Գրիգորյանը ցանկություն ունեցավ իր հետ այցելել Արցախ: Ալբերտ Ամիրջանյանը մարզիկների՝ հաղթանակի հասնելու համար կարեւորում է մոտիվացիան: Մարզիկը պետք է մտածի միայն մարզումների մասին: Կենցաղում ծագող առօրյա խնդիրների լուծման համար մարզիկներին պետք է ջանակցել,

որպեսզի նրանք իրենց ուշադրությունը կենտրոնացնեն միայն մարզումների վրա: Լոկ այդ դեպքում է հնարավոր բարձր ցուցանիշներ ունենալ սպորտում:

Մուայթայի մարզիչ Ալբերտ Աղաբալյանի խոսքով՝ նման հանդիպումները դրական են ազդում մարզիկների վրա: Ոգեւորվում են, օրինակ վերցնում իրենց համակրած մարզիկներից: Մարզիչը կարեւորում է նրանց փորձի փոխանցումը մարզիկներին: Ամռան ամիսներին նախատեսում են սեմինար-հավաքներ անցկացնել՝ իրավիճակը իրենց մարզածեւում բարձր ցուցանիշներ արձանագրած չեմպիոնների: Ամբողջ աշխարհը ճանաչում է մեր չեմպիոններին, թող արցախցի մարզիկներն էլ հնարավորություն ունենան նրանց ճանաչելու, անմիջական շփում ունենալու:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ



Բելգիայում: Պրոֆեսիոնալ մարտերին նախապատրաստվում է նաեւ Հոլանդիայում: Մրցաշարերում հանդես է գալիս հայկական

նելու նպատակով մտադիր է ավելի երկար ժամանակով գալ Արցախ: Առայժմ խորհուրդ է տալիս տեխնիկայի վրա լավ աշխա-

